



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


The image shows the front cover of an old book. The cover is decorated with a traditional marbled paper pattern, often called a 'stone' or 'shell' pattern, featuring irregular, rounded shapes in shades of brown, tan, and black. A vertical strip of dark red, textured material, likely leather or cloth, forms the spine of the book on the left side. In the lower-left corner, a small, rectangular, cream-colored paper label is affixed. The label has a double-line border and contains handwritten text in blue ink. The text is written in a cursive style and is organized into two lines: the first line reads 'Litn' and the second line reads '1113'.

Litn
1113

to ...
...

099 []

Մ Է Թ Թ Է Ր Ն Ի Ք



Գ Ր Ե Յ
Լ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

1871



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Քաղաքագիտաց՝ ինչպէս հասարակ մարդոց մէջ կան մարդիկ՝ որ գ'աշխարհ խոսորնակի կը տեսնեն եւ իրենց աս սկզբան իբր հետեւանք՝ կը կարծեն քէ հանրութեան վնասակար է, ինչ որ հանրութիւնն իրեն օգտակար կը համարի, եւ ըստ այնմ կը գործեն:

Աս կարգէն էր Մէքքէրնիք՝ որ Նաբօլտօնի Կայսրութեան օրէն մինչեւ 1848 Աւստրիոյ առաջին Նախարարն (մինիսթր) (1) ըլլալով, Եւրոպական քաղաքականութեան մէջ Քալէրանի հետ մասնակից եղած է այն մեծ գործերուն որք դարուս սկիզբը կատարուեցան:

Քալէրան՝ լոկ քաղաքագէտ մ'էր, իսկ Մէքքէրնիք քաղաքագէտ եւ միանգամայն կատարեալ պաշտօնեայ: Քաղաքագէտ՝ այն մարդն է որ կը բանակցի, եւ պաշտօնեայ այն մարդը որ կը կառավարէ: Քաղաքագէտ մ'իր երկրին արտաքին քաղաքականութեան առաջնորդն է, իսկ տէրութեան պաշտօնեայ մը միանգամայն իր հայրենեաց ներքին քաղաքականութեան վարիչը:

Մէքքէրնիք պահպանողական ըլլալով աշխատեցաւ Եւրոպայի հաւասարակշիւութիւնն անվար պահել եւ դուրսէն Նաբօլտօն Առաջնոյն աշխարհականութեանց առաջին առնելու համար ուրիշ տէրութեանց հետ դաշնակցելով՝ ներսէն վարչական ազդու միջոցներով յեղափոխութեան եւ յեղափոխականաց դէմ մարտնչիլ, եւ Հապսպուրկի յեղին հովանւոյն ներքեւ ապրող ազգերն ի մի ձուլել:

(1) Մենք՝ Գաղղիներն մինիսթր բառին նախարար կ'ըսենք եւ օր ս'էքա բառին պաշտօնեայ եւ այս ալ ի չ'գոյ՛ ուրիշ բառերու:

ՀՔ 1115

9 1113. 60

Արտաբնի Գաղափականութեան մէջ Մէքքէրնիքի սկզբունքը մարդասիրութիւնն էր եւ ներքին քաղաքականութեան մէջ ընկերային բարեկարգութիւն : Իր ասկիքին նպասակաց դէմ երկու գորաւոր արգելներ ելած են . մին՝ Մարէնկոյի եւ Վակրամի (1) դիւցազնը՝ որ նոր սէրուքիւններ կը կազմէր, ուրիշներ կը կործանէր եւ պատերազմը Եւրոպայի առօրեայ չարիքը դարձուցեր էր, եւ միւսը՝ յեղափոխութեան ոգին՝ որ ոչ միայն հին օրէնքներն ու սովորութիւնները կ'ուզէր քաղաքել, այլ բազմադարեայ գահոյից կ'սպառնար :

Մէքքէրնիքի՝ Անգղիոյ բիք պատեօնէին հետ միացած առաջին արգելքին կը յաղբէր, այլ երկրորդէն պիտի յաղբուէր : Մէքքէրնիքի՝ ազատութեան գոհն եղաւ, սակայն պատմութիւնը չ'պիտի կրնայ ուրանալ իրեն մարդասիրութեան ախոյեանն ըլլալու փառքը, բոս որում Նաբոլէօնի Կայսրութեան միջոցին ընդհանրական խաղաղութեան վերահաստատութեան եւ տեսականութեանն աշխատեցաւ, ընդհանրական խաղաղութեան՝ զոր Սուրբ-դաւենակցութեամբ նուիրագործել կը բաղձար :

Թալէրանի վրայ տեսութիւն մ'ընելէ յետոյ, պէտք էր իր երեւելի ժամանակակցին վրայ ալ տեսութիւն մ'ընել եւ քանի մը տողերու մէջ բոս կարելոյն ամփոփել Մէքքէրնիքի կեանքը՝ որ այսօրուան մեծ խնդրոց մէջ մեծ ազդեցութիւն ունեցած է :

Սասգիւղ 15 Հոկտ. 1870

Ղ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ՄԷՔՔԷՐՆԻՔ

Ա.

ՀԱՍԱՐԱԿԱՅ ԹՈՒԻՔ ԵՒ ՄԷՔՔԷՐՆԻՔ

Անոնք որ որ եւ է յատկութեամբ ու տիտղոսով ընկերութեան բարձունքը կը գտնուին ամենէն դեղեցիկ ներբողներու հետ ամենէն կծու թշնամանաց առարկայ կըլլան :

Եթէ իրր փիլիսոփայ կը փայլին, ժողովուրդը կ'ըսէ թէ մութ կը դրեն, եթէ բանաստեղծ են, վերացեալ գազափարաց տարածիչ են, եթէ բժիշկ են թոյններու սիրահար են, եւ եթէ քաղաքագէտ են խարերայ են :

Թաղէսէն մինչեւ Ժիւլ-Սիմօն փիլիսոփայից սկզբունքները քաջքշուկ մեկնութեանց տեղի տուին եւ պատճառ եղան իրենց դէմ ամբաստանութիւններ տարածելու . Լէյպցից՝ ընդհանուր լեզու մը կը հնարէ ուստի եւ անհնարինս կը խնդրէ եւ իր բարձրութեանէն կ'իյնայ, Ռուսո ընկերականութեան դէմ կ'աքացէ եւ հետեւաբար իր միւս գործերն ալ աս մարդատեաց ոգին ներշնչած է, Քանթ՝ փիլիսոփայութիւն չ'է գրած այլ բոլորովին գիտական խուզարկութեանց յարելով հոգեբանութեան սահմանէն շեղած է, Փուֆէնտորֆ՝ զ'ընական իրաւունս ի գիտութիւն կը վերածէ եւ նորութիւն մ'ըրած կըլլայ :

Հոներոսէն մինչեւ Հիւկօ բանաստեղծք իրենց Ձօյիլոսներն ունեցած են, ու դեռ մեր օրերը զ'Սլէֆըրէտ տը Միւսէ Գաղղիոյ ամենէն զգայուն բանաստեղծը, այդ երիտասարդաց բանաստեղծը կ'ար-

(1) Մարէնկոյի ինչպէս Վիեննայի մօտ Վակրամի մէջ Աւստրիացիք Նաբոլէօնէն չարաչար յաղբուեցան :

համարհեն մերթ ընդ մերթ բարոյականութեան հետ ներդաշնակ չ'երթալուն համար, զ'լամարթին քան զ'չափ կրօնասէր կը գտնեն, Վիքթօր Հիւկօ մութ կը գրէ կ'ըսեն, վիշտերը զուարթութեամբ կը նկարագրէ եւ աղէտներուն վրայ գոգցես կը խնդայ:

Վերջապէս չ'կայ մարդ մը որ որ եւ է վիճակի արւեստի եւ գիտութեան մէջ փայլի եւ որ եւ է պարագայի մէջ յարձակմանէ զերծ համբաւ մ'ունենայ: Մանաւանդ քաղաքագէտները, պաշտօնեաները ու տէրութեան գործակալները՝ որք վարելու եւ առաջնորդելու կոչուած են եւս առաւել թշնամանաց ենթակայ են: Իրենց խօսքերը չարակամութեամբ կը մեկնեն, իրենց գործերը խտուրթեամբ կը դատեն:

Պ. Թիէր իր Պատմութիւն Հիւպատոսութեան եւ Կայսրութեան գրքին սկիզբները կ'ըսէ թէ երկրի մը պաշտօնեաները միշտ, եւ պաշտօնէութեան կոչուած անձինքն ընդհանրապէս, նոյն երկրին ընտրեալագոյն մարդիկն են:

Երբ աս խումբ մը մարդիկը միլիօնաւոր ժողովրդոց գլուխը կ'անցնին հասարակութեան գործերը տեսնելու համար, եւ իրենց բարձր աստիճանին շնորհած դիւրութիւնները կը վայելեն, բնական է որ կարգ մը մարդիկ նախանձու ակնարկ մը նետեն առնոց վրայ եւ իրենց ստորնութեան վրէժը բամբասանաց զէնքերով առնուն:

Առանց փուշի վարդ չ'ըլլար կ'ըսէ ռամկօրէն առած մը: Երջանկութիւնն ալ իր գէշ կողմը ունի որ զրպարտութեան հրաւէր կարգալն է: Արդարեւ մարդ մը երբ լիազօր իշխանութիւններ ունի իր ձեռք, պէտք է ամեն ժամ, ամեն օր իր ժամանակակցաց հարուածներուն դէմ իր լանջքն ամրապնդէ եւ առ ոչինչ գրէ մասնաւորաց դատաստանները: Մարդիկ կը մտածեն պաշտօնի մը վրայ որ իրենց չը տրուիր,

կը մտածեն սիրուհւոյ մը վրայ որ իրենց երգումներուն չ'ըներ, կը մտածեն արծաթին վրայ որ իրենց գրպանը չ'կնար, եւ աս ամենուն պատճառ զ'վարջութիւն կը համարին, զ'վարջութիւն՝ որու անդամներն ունին ինչ որ իրենք չ'են ստացած: Ընդհանրապէս յեղափոխութեանց մեծ մասին շարժառիթն այս նախանձու եւ փառաց կիրքն է քան թէ հասարակաց շահը:

Իտալիոյ միութեան հիմնադիր Քալուր կոմսը ազատական քաղաքագէտ մ'էր, բայց հասարակաց կարծիքը չ'էր վարաներ անոր խիղճն առաձգական գրտնելու: Բալմէրսթըն՝ քսան եռասուն տարի շարունակ բոլոր Եւրոպայի տէրութեանց Մենտորն եղած էր, բայց հասարակութիւնը կ'ըսէր թէ իր ծառայութիւնները մի միայն Անգլիոյ եւ իր անձին նուիրած է:

Ըսել չ'ենք ուզեր թէ Մէթթէրնիք՝ անբասիր է, այլ կը բաղձանք ցուցնել թէ իր դէմ եղած զրպարտութեանց մէջ չափազանցութիւն կայ: Մէթթէրնիքի վրայ երեք գլխաւոր ամբաստանութիւնք եղած են:

Անբարոյականութիւն,
Խաբեբայութիւն,
Կաւառակրծութիւն:

Չ'ենք ուզեր ամբաստանութեան առաջին կէտը քննել վասնզի Մէթթէրնիքի հրապարակային կենաց հետ յարաբերութիւն մը չ'ունի: Մէթթէրնիք՝ Վիէնայի գեղեցիկուհեաց ումանց հետ Աստղիկի Չերմ երկրպագու մ'ըլլալով թերեւս դայթակղութիւն մը տուած է զինք շրջապատողաց, բայց հասարակաց բարւոյն վնաս մ'ըրած չ'է:

Աս նկատմամբ Մէթթէրնիքի վրայ եղած ամբաստանութեան՝ նմանապէս ուրիշ մէկ քանի քաղաքա-

գէտներ ալ ենթակայ եղած են : Գողցես Մէթթէր-
նիք՝ ազգաց եւ ազանց մէջ՝ դարերու դրած պա-
տուարներն՝ անհետացնել ուզելով՝ վորձ մ'ըրած
ըլլայ հաւասարապէս ջնջել այն անջրպետը՝ զոր պատ-
շածից օրէնքն ու ընկերային սովորութիւնք սեռե-
րու մէջ դրած են :

Մէթթէրնիքի ընտանեկան կենաց դէմ իր ատեն
տարածուած զրոյցները՝ որք իր թշնամեաց բերանը
կը պտտէին հաստատ կը ցուցնեն թէ Յրանչիսկոս
Ա. նոյն պաշտօնեան՝ նահապետական կեանք մը
չ'էր անցնէր :

Կերվինուս պատմաբանն ալ կը վկայէ թէ Մէթ-
թէրնիքի առտնին կենցաղը Յրանչիսկոս Ա. նոյն
կայսերազուն գերդաստանին առաքինութեան հետ
հակապատկեր մը կը կազմէր : Սակայն յաջս Կայսեր
աս անձին քաղաքական գործոց մէջ կարեւորութիւնն
այնչափ մէծ էր որ չ'էր կրնար զ'այն իր քովէն հե-
ռացնել թէ եւ Սարգանաբալի մը կեանքն ալ վարէր :

Գալով Մէթթէրնիքի խաբեբայութեան եւ կաշա-
ռակրծութեան , շատ պատմաբաններ՝ աս պակասու-
թեանց մէջ չափազանցութիւն եւ շատերն ալ զբր-
պարտութիւն կը գտնեն :

Բ.

ԲԱՐՔ ՄԵԹԹԵՐՆԻՔԻ

Քլէմէնտ-Մեծն-Մէթթէրնիք իշխանին Ֆիլիզական
կազմութիւնը կը մղէր զնա հաճոյից բաժակը ց'մրուր
քամել :

Իր երիտասարդութեան ժամանակ իբրեւ շատ սի-
րուն մարդ կ'անցնէր , եւ Վիէնայի պարահանդէս-
ներուն թագաւորն էր :

Իր զխմաց գլխաւոր նշանը ժպիտ մ'էր , եւ իր
անձին առաջին յատկութիւնը կը կազմէին իր հրա-
պուրիչ ձեւերը : Կերվինուս՝ կ'ըսէ թէ Մէթթէրնիքի
քմծիծաղը զինքը դիտողները տարբեր կերպով մը
կը մեկնէին , եւ ըստ պարագայից անոր զանազան
նշանակութիւններ կուտային :

Լան Մարաջախտը աս ժպտին մէջ նուսատ եւ ան-
ողորքելի դիտաւորութիւն մը կը նշմարէր , Հօր մայր
Սեպուհը՝ խորամանկութիւն եւ ցանկութիւն , եւ
Հօրս Ռըսէլ լոկ մեքենական սովորութիւն մը :

Մէթթէրնիք խելացի մարդու դէմք չ'ունէր եւ
ինչպէս ամենէն աւելի նրբամիտ մարդիկ՝ իրենց նըր-
բամտութիւնը կը ծածկեն , Մէթթէրնիք ալ իր ան-
նշան դէմքին շնորհիւ կրնար իր քաղաքագիտական
բարձր յատկութիւնները թաքուն պահել :

Չ'ինքն առաջին անգամ տեսնող մը կրնար իր վրայ
բոլորովին վստահիլ , խկ անոնք որ զ'ինքն աղէկ կը
ճանչէին իր սիրուն բնաւորութեան ազդեցութեամբ
կը խաբուէին :

Իշխան Մէթթէրնիք՝ շատ գիտուն չ'էր , բայց աշ-
խատելով միտքը քիչ մը բացուած էր , Իր ուսմունքը
Սթրասպուրկի եւ Մայանսի մէջ ըրած էր , այլ Կեր-
վինուս կ'ըսէ թէ իւր դասընկերները կը սնդէին թէ
իշխանը՝ բան սովորելու փոյթ չ'էր ըներ : Գրագիտու-
թեան տարերաց անգամ տեղեկութիւն չ'ունէր եւ
իր պաշտօնագրերն , ըստ ասութեան նոյն պատմա-
բանին , քերականական սխալներով լի էին :

Կերվինուս՝ Մէթթէրնիքի տգիտութեան ասպա-
ցոյց մը տալու համար կը պատմէ թէ երբ Ռահէլ-
Լըվէն անուն անձը , ընկերութեան վիճակն ուրիշ բան
չ'է ըսաւ այլ դասարկութեան անհասնան խորոքիւնը ,
Մէթթէրնիք՝ աս գռեհիկ եւ աննշան բացատրու-
թեան , ճամարտապէս հանճարեղ խօսք անունը տուաւ :

Դարձեալ նոյն պատմաբանն է որ կը պնդէ թէ Մէթթէրնիք՝ իր բոլոր ուսումը կանանց ընկերութեան կը պարտաւորի ուր ի տղայ տիտց կը գտնէր իր գոյութեան տարերքը :

Մեր Գերմանացի մեծ պատմաբանը՝ կիրք մ'ունի որուն նշանը իր պատմութեան էջերուն մէջ յայտնի կ'երեւայ , թշնամանել այն պատմական անձինքը որք Գերմանական միութեան համար չ'աշխատեցան եւ կամ զ'այն արգիլել ջանացին :

Մարդ մը՝ որ Մէթթէրնիքի չափ զ'մարդիկ ճանչել զիտէ , ընկերութեան տկար կողմը նշմարած է , եւ նշանաւոր պարագաներու ոչ միայն անտարբեր հանդիսատես այլ հռչակաւոր գերասան մ'եղած է , այդպիսի մարդ մը՝ առանց ուսնելու կը սովորի եւ անաշխատ կը յաջողի :

Մէթթէրնիքի գլխաւոր պակասութիւնները , զ'որ ուրիշ պատմաբաններ կը համրեն , եւ որ իր գեղեցիկ յատկութիւնները մոռացութեան մէջ կը ձգեն գլխաւորարար իր կազմուածքէն յառաջ կուգային :

Մէթթէրնիք՝ այլ զգայուն՝ պարտուց գաղափարը չ'ունէր : Կ'ընէր ինչ որ իր զգացումները իրեն կը ներշնչէին եւ իր չափազանց զգայականութեանն համար մերթ առ ոտն կը կոխէր ինչ որ իր պարտքերն իրեն կը պատուիրէին :

Կ'ըսեն թէ Մէթթէրնիք՝ գեղեցկութեան այնչափ քիչ կը դիմադրէր որ եւրոպական մեծ տէրութիւն մը Սականի դքսուհւոյն միջոցաւ պինքը շահեցաւ :

Մէթթէրնիքի ճարտարութիւնը մի միայն իր հրապուրիչ ձեւերուն վրայ չ'էր կայանար , այլ այն երկդիմի քաղաքականութեան որուն մէջ կրցած էր ամեն ժամանակ յաջողիլ :

Մէթթէրնիք՝ իր աս ճարտարութիւնն մինչեւ անգամ իր անձնական գործերուն մէջ ցոյց կուտար :

Մէթթէրնիք՝ տիկնայց հետ այնպէս կը վարուէր ինչպէս վարուեցաւ եւրոպայի տէրութեանց հետ :

Մէթթէրնիք՝ գլխէր կանանց տկար կողմը եւ փոխանակ զ'անոնք սիրով շահելու նախանձու միջոցաւ կը հրապուրէր :

Արդէն ուրիշ տեղ ալ ըսած եմ , աշխարհի մէջ երեք մեծ գորութիւնք կան որք ընկերութեան վրայ կը բռնանան . սէրը , կրօնքն ու գրիչը . Մէթթէրնիք գիտցած էր ասոնք իրեն գործիք ընելու եւ ինչ որ չ'էր կրնար սակի գորութեամբ ընել կը յաջողէր այլոց կրքերուն միջոցաւ գլուխ հանել :

Մէթթէրնիքի հաճոյքը իր շահուց հետ կապուած էր :



Փ .

Մէթթէրնիքի եւ ՆԱԲՈՒԷՅՈՒՆ Ա .

Բաօլի Շանեի կոմսը՝ իր « Պատմութիւն քաղաքականութեան եւրոպական տէրութեանց » գրքին ներածութեան մէջ՝ ընդհանուր քաղաքականութեան վրայ ակնարկ մը նետելով կ'ըսէ « Եթէ բնութիւնն իր երեւոյթներն ունի որք զ'մեզ կը զարմացնեն , քաղաքականութիւնն ալ իր երեւոյթներն ունի որք զմեզ կը շփոթեն եւ այն ծծմբային նիւթերը՝ որք յ'ընդերս երկրի կը խմորին , չ'են կրնար նախանձու , ատելութեան , վրիժուց , փառասիրութեան եւ մարդկային սիրտը պատռող կրքերէն աւելի բուռն ժայթմունք , աւելի սոսկալի յեղափոխութիւններ , աւելի ցաւալի աղէտներ եւ աւելի կակծալի պարագաներ յառաջ բերիլ : (1) »

(1) Կոմս Բաօլի Շանեի : Պատմ. Քաղ. Ա. հատոր էջ 28 :

Արդարեւ կեղծուստաօրիք քաղաքականութիւնը՝ փառասիրութեանց եւ կրից պատերազմ մ'է որոյ մէջ իբր զէնք ի գործ կ'ածին խաբեբայութիւնք եւ խորամանկ մեքենայութիւնք : Այլ ճշմարիտ քաղաքականութիւնը կը ձգտի ազգաց իրաւունքն յարգել տալ եւ քակել այն դաւերը որ ժողովուրդի մը բարօրութեան դէմ կը լարեն անոնք որք խաբուսիկ փառքի մը սիրահար եղած են :

Ճշմարիտ քաղաքականութեան գլխաւոր պարտքը՝ զօրութեան դէմ մաքառիլ է : Աս սկզբունքն էր որ ծնունդ տուաւ Եւրոպական հաւասարակշռութեան որով տէրութիւնք՝ համազգային օրինաց պահպանութիւնը երաշխաւորել կ'ուզէին :

Նաբօլէօն Ա. իր զինուց յաջողութեանն ապուինեւրով կը բաղձար ոչ միայն Ֆրանսայի չրջակայ տէրութիւնները դբաւել, այլ նաեւ բոլոր Եւրոպայի դիկտատորն ըլլալ :

Իշխան Մէթթէրնիքի պաշտօնէութիւնը՝ աս վտանգաւոր աշխարհակալին դէմ մաքառելով սկսաւ :

Շատ կենսագրաց սովորութիւնն է իրենց դիւցազնին պատանեկութեան վրայ մանրամասնութիւններ գրել եւ մինչեւ անգամ անոր մէջ անանկ դէպքէր գտնել որք այդ մեծ անձերուն ազգայ փառաց ու յաջողութեան յառաջագոյն նշան եղած ըլլան :

Լուրջ պատմաբան մը, զ'որ օրինակ, կ'ըսէ թէ Նաբօլէօն Ա. իր մանկութեան օրերուն մէջ իր կրտսեր Լուի եղբօր չափաբերութիւն դաս կուտար : Լուի՛ իրենց բնակարանին վերի յարկը կը բնակէր եւ Նաբօլէօն վարի յարկը :

Առտու մը որ Լուի խոր քնոյ մէջ թմրած փոյթ չէր ըներ եղբօրը դասերը մոխի ընելու, Նաբօլէօն դաւազանով վարէն կ'սկսի վերի յարկին առատաղը ծեծել որպէս զի եղբայրն արթննայ :

Լուի կէս քուն կէս արթուն անկողնէն դուրս կը նետուի եւ ի՞նչ կուզես եղբայր կ'ըսէ :

Ինչո՞ւ ուչ ելար կը հարցնէ իրեն Նաբօլէօն :

Գեղեցիկ երազ մը կը տեսնէի կը պատասխանէ Լուի՛ :

— Ի՞նչ էր ձեր երազը :

— Տեսայ որ դուք Կայսր էիք եղած եւ ես Թագաւոր :


Արդարեւ շատ տարիներ վերջը Նաբօլէօն Ա. Ֆրանսայի Կայսր եղաւ եւ Լուի (արդի Նաբօլէօն Գ. ի հայրը) Հօլանտայի թագաւոր :

Դարձեալ կենսագիրք՝ կը պատմեն թէ Կոմս Պիամարք, այժմ՝ դիւանապետ Գերմանական Կայսրութեան, երիտասարդութեան ատեն իրաւագիտութեան ուսումը լրացնելէ ետք՝ յանձնարարական թղթերով կը ներկայանայ Պէրլինի մէկ պաշտօնատունը եւ կ'ուզէ դիւանը յաճախել : Դիւանապետը այս անձին ստէպ երթեւեկէն ձանձրացած եւ նոր մարդու մ'ալ պէտք չ'ունենալով սիրալիր ընդունելութիւն չ'ընէր իրեն :

Օր մ'ալ երբ Դիւանապետը քովը հիւր մ'ունէր, Պ. Պիամարք դուրսը նստարանին վրայ կ'սպասէ, որպէս զի կարենայ զ'Դիւանապետ առանձին տեսնել : Հազիւ թէ հիւրը կը մեկնի, Դիւանապետն անեկին կիսաբաց դռնէն դուրս նայելով ա՛ Պիամարք, կ'ըսէ դարձեալ դո՞ւք էք, ըսէք տե՛սնիմ ի՞նչ կ'ուզէք :

Պ. Պիամարք՝ որ ջղային դրդուելիւն մ'ունիլ էր, աս ասպետական ընդունելութեան վրայ անդաճած՝ կէս ժամ յառաջ, կը պատասխանէ, զ՞ի տեսնել կ'ուզէի եւ հիմա անոր հակառակը կը բաղձամ : Աս պատասխանը տալէ ետք Պ. Պիամարք գըլխարկն ու գաւազանը կ'առնէ եւ կը հեռանայ :

Տարիներ կ'անցնին : Օր մը Կոմս Պիամարք իբրեւ



գահերեց Պէրլինի դահլըճին յ'այց կ'ենէ Բրուսիոյ մէկ գաւառին : Գաւառապետը իր աստիճանին պատշաճ մեծարանքներն ընեցէ՛ն յետոյ կ'ուզէ մեկնիլ եւ կը հարցնէ Պ. Պիամարքի «Ձեր վսեմութիւնը ուրիշ բանի մը պէտք ունի : — Ոչ, կը պատասխանէ, բայց կ'ուզեմ ձեզ հարցում մ'ընել :

— Հրամայեցէք :

— Ձիս չ'էք ճանչէր :

Գաւառապետը՝ աս անակնկալ հարցումը լսելով կ'ապշի եւ չ'կրնար հասկնալ թէ նորին վսեմութիւնն ինչ ըսել կ'ուզէ :

— Միտքերնիդ կուգայ, կը յաւելու կոմսը, այն երիտասարդը, վերջապէս Պիամարքը, որ տասը տարի յառաջ զ'ձեզ իւր խնդրօք կը ճանճրացնէր երբ դուք դիւանական պաշտօն մը կը վարէիք :

— Ձեր վսեմութեան ըսածը չ'եմ կրնար ըմբռնել կը պատասխանէ գաւառապետը՝ շիտթելով եւ կոմսին ըսածին թափանցելով :

— Շիտթելու բան չ'կայ, սիրելի պարոն, կ'ըսէ Պ. Պիամարք միայն թէ աս դէպքը կը սովբեցնէ մեզ աւելի աղէկ վարուիլ յուսարկց ու աշխատաւոր երիտասարդաց հետ (¹) :

Վերջապէս կենսագիրք՝ կը բաղձան որ նշանաւոր մարդիկ արեւու նման գեղեցիկ արշալոյս մ'ունենան, եւ վիպասանի մը բեղմնաւոր երեւակայութեամբ մոլութիւն մ'ունին անանկ պատմութիւններ յօրինելու որք կարենան այդ մարդոց խորհրդաւոր մանկութիւն մ'ընծայել :

Մէթթէրնիքի վարուց վրայ տեսութիւն մ'ընելով մեր դիտաւորութիւնը բոլորովին հեռի է նորա քաղա-

(¹) Տես Ալմանաք տը Վօլեօր 1866 :

քական կենաց հետազօտութիւնն ընելէ, ուստի եւ առանց իշխան քաղաքագիտին առաջին քայլերուն հետեւելու, առանց պատմելու թէ ինչպէս իր հրապուժիչ ձեւերը Ֆրանսօս Ա. Կայսեր ուշադրութիւնը իր վրայ հրաւիրեցին, առանց խօսելու իր Տրեզտա եւ ի Պէրլին ըրած յաջող եւ ճարպիկ դեսպանութեանց կարճ միջոցին վրայ, վերջապէս առանց իր մանկութեան վէպը շարադրելու, կ'անցնինք իր պաշտօնէական դործերուն կարճ ի կարճոյ պատմութիւնն ընելու եւ կ'ուզենք ցուցնել թէ աս մեծ քաղաքագէտը ինչ ըրաւ զ'մեծ աշխարհակալը կործանելու համար :

Արդ՝ իշխան Մէթթէրնիքի ջանքերը կը ձգտէին ճարտար միջոցներով աս նոր Աղեքսանդրին երազներն ի դերեւ հանելու :

Մէթթէրնիքի Նաբօլէօն Ա. նոյն դէմ վարած գաղտնի եւ անձայն պատերազմը, զինուորական ուժի դէմ ճշմարիտ քաղաքագիտութեան, սրոյ դէմ իրաւանց պատերազմն էր :

Մէթթէրնիք՝ երկար ժամանակ Նաբօլէօնի քով Աւստրիոյ դեսպան եղած էր (¹), ուստի եւ աւելի ունեցած էր այս յաջող վեհապետը մտէն տեսնելու, անոր տկար կողմը ըմբռնելու, զայն շրջապատողները ղննելու եւ վերջապէս ստանալու այն հաղարումէկ տեղեկութիւնները որք չ'են կրնար կասկածոտ, ուշադիր, մանրագէտ եւ խորամանկ դեսպանագիտի մը ուշադրութենէն վրիպիլ :

Մէթթէրնիք ամենէն աւելի յաջողակ էր աս անձը տապալելու եւ հաստատելու ոչ միայն Եւրոպայի

(¹) Արդի Կոմս Պիամարք ալ 1861—2 ի միջոցները Կիյօմ Ա. նոյն Դեսպանն էր ի Փարիզ ուր զիտցած էր Մէթթէրնիքի նման ժամանակը պարապ չ'անցնել և հասու ըլլալ երկրին հանգամանաց և զարգացման միջոցներուն :

անդորրութիւնը , այլ նաեւ հիմունքը դնելու այն հաւատարակչութեան որոյ նախաշարժումն իրեն կը վերաբերի եւ զ'որ յղացաւ ոչ միայն Նաբոլէօն մեծին աշխարհակալութեանն առաջըն առնելու համար , այլ նաեւ սպառապիւն մէջ որեւէ տէրութեան փառասէր դիտաւորութիւններն ու աշխարհակալութեան փորձերը անկարողութեան դատապարտելու համար :

Բոլոր Եւրոպայի հզօր վեհապետները՝ որք Լուի Ժ.Չ գլխատմանէն յետոյ Գաղղիական յեղափոխութեան դէմ զինած էին, ստիպուած էին այդ հզօրագոյն անձին կամքն իրբեւ օրէնք ընդունելու :

Եւրոպայի մէջ մինակ Անգղիա՝ կար որ Ովկիանու ջրերով շրջապատեալ՝ ցամաքային հզօր տէրութեան մը յարձակմանէն ազատ կը մնար : Անգղիա՝ քաղաքակիրթ աշխարհի մէջ խաղալու երկու գեղեցիկ դեր ունէր , նախ իր հպատակաց կամ լաւ եւս ազգացնոց ցամաք երկրին վրայ ունեցած տուրեւառիկ շահերը պաշտպանել եւ իր դրից իրեն տուած բարոյական մեծ ազդեցութիւնը գործածել :

Ապաքէն Մեծն-Բրիտանիա Եւրոպայի ոստիկանն էր եւ կ'ուզէր իր ձայնը հնչեցնել հոն ուր թնդանօթք՝ զ'օրէնս կ'եղծէին եւ ուր յեղափոխութեան զաւակ կեսար մը որոտընդոտ պատգամներ կուտար :

Սէնդ-ձէյմսի դահլիճը՝ Բիթ երեւելի պաշտօնէին վարչութեան տակ Նաբոլէօնի առաջին յաղթանակաց ատենն իսկ կը հասկնար թէ ինչ մեծ վտանգ իր բարոյական ազդեցութեան կ'սպառնայ եւ որքան մեծ փնտս պիտի հասնի Անգղիական վաճառակաւութեան : Կ'ուզէր արգելք ըլլալ այն քաղաքակաւութեան որոյ նպատակն աշխարհակալութիւնն էր , կը ջանար զսպել այն սանձարձակ կրքերը որք եւս աւելի ահեղ փառասիրական դիտումներու նախա-

շաւիղ պիտի ըլլային , այլ չէր կրնար առանց դաշնակցի իր քաղաքականութեան հետեւիլ , իր նաւատորմիցը բաւական չէր ցամաքային զօրութեան մը հակակշիռն ըլլալու : Պէտք էր որ մեծ տէրութեան մը բանակն օժանդակ ըլլար իրեն : Եւ այս ալ դիւրին էր գտնել : Անգղիոյ պնտականութիւնը՝ նա մանաւանդ Պ . Բիթ վախնալով որ 1791—92 ի մեծ յեղափոխութեան ընկերվարական վարդապետութիւնները Մեծին Բրիտանիոյ մէջ կը տարածուին , զ'անոնք խեղդելու եւ խսպառ ապարդիւն ձգելու համար կրցած էր զ'Եւրոպա Գաղղիոյ դէմ զինել :

Սակայն Եւրոպայի վեհապետաց Գաղղիական յեղափոխութեան դէմ ինչպէս նաեւ քիչ վերջը Գաղղիոյ կայսրութեան դէմ վարած պատերազմն անյաջող կ'երթար :

Եւրոպայի պարտութեան երկու գլխաւոր պատճառ կար , նախ դարաւոր բանութեան լուծը թօթափող ժողովրդեան մը (այսինքն Գաղղիացոց) անդիմադրելի եռանդը , երկրորդ ընդդէմ Գաղղիոյ դաշնակցող վեհապետաց նուազ համաձայնութիւնը :

Հետեւաբար , Եւրոպայի մէկ կարեւոր մասը Գաղղիոյ ձեռք անցած էր , Բրուսիոյ , Սւստրիոյ եւ Ռուսիոյ բանակները Նաբոլէօնի բանակաց առջին խոյս տուած էին , Բրուսիա իր դաւառաց կէտը կորուսած էր եւ Սւստրիա՝ Վիէննայի դռներն հասած թշնամոյն Հետ նուաստացուցիչ դաշնադրութիւն մը կնքելու ստիպուած :

1810 ին Նաբոլէօնի մեծութիւնն իր գեներլիթն էր հասած եւ Եւրոպայի ազգաց անկախութիւնը մեծ վտանգի մ'ենթարկուէր էր :

Նաբոլէօնի փառասիրութեան՝ մէկ բան միայն կը պակսէր , իր ցեղը Եւրոպայի վեհապետական հին ցեղի մը հետ խառնել : Աս նպատակին հասնելու հա-

մօր ժողջֆին կայսրուհին որ ամուլ էր , կ'արձակէր , եւ առիթ տուած էր բոլոր Եւրոպայի իր ազազայ ամուսնութեան վրայ խօսելու :

Չ'առաջինն նաբօլէօնի աչքը՝ Ռուսիոյ կայսերական գերդաստանին վրայ դարձած էր եւ ամէն մարդ կը յուսար թէ նաբօլէօն կայսրը Օլկա մեծ դքսուհւոյն հետ պիտի ամուսնանայ :

Սակայն երկու ցեղերուն կրօնից տարբերութիւնը , եւ խորութիւնը՝ արգելք դրած էր ան ամուսնութեան : Աւելի հաւանականն այն է որ Մէթթէրնիք զ'նաբօլէօն կայսրը իր ամենէն մեծ փառասիրութեանն միջոցաւ որսալ ուղեւորէ , աս դժուարութիւնները երեւան հանած , եւ կամ բազմապատկած ըլլայ :

Մէթթէրնիքի դիտաւորութիւնը իր տիրոջն կամ վեհապետին (Ֆրանսոս Ա. նոյն) աղջիկը նաբօլէօնի տալ էր եւ ընտանեկան կապով Աւստրիոյ յարեւ այն մարդը որ քաղաքական կապերը շարունակ կը խզէր :

Մէթթէրնիքի աս ջանքերուն ամենէն մեծ վիպաթիւնը կը գտնենք «եկեղեցին Հռոմայ եւ առաջին կայսրութիւն» տիտղոսով պատմական գործին մէջ զ'որ Պ. ա' Օսոնվիլլ երեւելի հեղինակն վերջերս հրատարակեց : Տ' Օսոնվիլլ կ'ըսէ թէ աս թուականին Փարիզ թիւղըրիի սպառտին մէջ ընդունելութեան օր մը , Պ. Ֆլորէ՝ Փարիզու Աւստրիական դեսպանատան առաջին բարտուղարը՝ եւ նաբօլէօն կայսեր արտաքին իրաց պաշտօնէին մտերիմ բարեկամ Պ. Մէմօնվիլլ իրարու հետ հետեւեալ խօսակցութիւնն ունեցան :

Պ. Մէմօնվիլլ Աւստրիացի Դեսպանագետին հարցուց թէ ինչո՞ւ Աւստրիոյ կայսերական գերդաստանը չ'ուղեց նաբօլէօն կայսեր հետ խնամութիւն ընել :

— Ո՞վ ըսաւ Ձեզ թէ չ'ուղեցինք , պատասխանեց Պ. Ֆլորէ : — Այնպէս կը կարծեն , սխալ է՝ արդեօք : — Թերեւս — Ի՛նչ կրնայ ըլլալ որ միտք ունենան . . .

Թերեւս դուք միայն աս խնամութեան համախառն ըլլաք բայց Պ. Դեսպանը . . . :

— Կը խօստանամ որ Պ. Շվարձէնպէրի (այն առեւն Դեսպան Աւստրիոյ ի Փարիզ) աս դադախարին դէմ չ'գար : — Բայց իշխան Մէթթէրնիք :

— Ամենեւին դժուարութիւն չ'յարուցանէր :

— Բայց Աւստրիոյ կայսրը : — Երբէք : — Եւ կայսրուհին որ զմեզ (նաբօլէօնեանք) չ'սիրեր :

— Դուք զ'այն չ'էք ճանչէր . ըստ որում փառասէր է , դիւրին է զ'այն համուզել :

Պ. Մէմօնվիլլ՝ որ ըստ ասութեան ա' Օսոնվիլլի , աս տեսակ խօսքերը անուշաղիւ կերպով մտիկ ընող մարդ չ'էր , իր բարեկամին Պասանօ Դուքսին քով երթալով պատմեց ինչ որ լսած էր : Դուքսը որ Ռուսաց իշխանուհւոյն հետ առաջադրեալ խնամութեան վերաբերեալ կարեւոր եւ ստիպողական պաշտօնադրէր ղրկելու գրաղած էր , աս զեկուցման վրայ ուրախացաւ : Երկրորդ առտուն զ'այն նաբօլէօն կայսեր հաղորդեց : կայսրը՝ Պասանօ դքսին խօսքերը մեծ բերկրանօք լսեց :

Կեսարաց աղջիկ մը իր բախտին կապելու եւ հասարակ զինուորէ յառաջ եկած կայսեր մը Եւրոպայի ամենէն նշանաւոր եւ ամենէն հին արքունի գերդաստանին հետ խնամանալու դադախարը՝ զ'ինքը բողորովին զինովցուց : Կը կարծեր միանգամայն թէ աս միութիւնը կրօնապէս եւ քաղաքականապէս օգտակար է իրեն : Կրօնապէս՝ վասնզի կաթօլիկ իշխանուհւոյ մը հետ ամուսնանալով՝ կը հաւատար թէ իր առաջին ամուսնութեան եղծումը կրօնամոլ մարդոց առջին օրինաւոր կ'ընէ եւ քաղաքականապէս՝ որովհետեւ կը յուսար թէ աս խնամութեամբ յաւերժական կ'ըլլայ այն դաշնակցութիւնը զոր զ'Գաղղիա՝ Աւստրիոյ հետ պիտի կապէր եւ թէ կրնայ աս

զորաւոր դաշնակցութեամբ իր երազներուն կատարումը տեսնել :

Նաբօլէօն՝ արդէ պատմական մարդոց ամենէն մեծն էր այլ չ'ունէր այն հեռատեսութիւնը որ կարենար նշմարել Մէթթէրնիքի իրեն դէմ լարած դաւը , զուրկ էր այն կասկածոս բնաւորութենէն որ ճշմարիտ քաղաքագէտը մինչեւ անդամ փառաց եւ անընդհատ յաջողութեան մէջ կ'արթնցունէ եւ կը ցուցնէ իրեն այն վտանգը որմէ ոչ ոք ազատ է :

Անյաջող է այն նաւապետը որ ծովուն կատարեալ հանդարտութենէն կը խաբուի եւ կամ զ'այն տեւական կը կարծէ , ինչպէս նրբամտութենէ զուրկ է այն մարդը որ մարդկային բնութեան կը վտահի եւ ոչ միայն իր մտերմաց այլ նաեւ ծանօթներուն հետ անկասկած կը վարուի : (1)

Այսպէս Մէթթէրնիք՝ Աւստրիացի իշխանուհին Նաբօլէօնի հետ ամուսնացնել կուզէր եւ այս ամուսնութիւնը այնպիսի միջոցներով կ'առաջարկէր որ եթէ մերժողական պատասխան մ'ալ առնէր անպատուութիւն չ'էր գար Աւստրիական վարչութեան եւ առաջարկութիւնն այնպէս կը նկատուէր իբր թէ եղած չ'ըլար :

Աս անուղղակի միջոցներով ըրած փորձը յաջողելէ ետք , Մէթթէրնիք՝ եւս առաւել դժօար եւ փափուկ գործ մ'առնէր ընելու , այն է համոզել զ'Ֆրանսոսա առաջին , իր Տէրը , որ հաւանութիւն տայ այս ամուսնութեան : Միապետ մը՝ որ իր նախնեաց վրայ կը պարծենար , արեան ազնուականութիւնը՝ կրօնի չափ կը յարգէր , չ'պիտի ուզէր անտարակոյս յեղափոխութեան միջոցաւ բարձրացած , եւ բախտին


(1) Միրտն ու ծովը իրարու կը նմանին , երկուքն ալ իրենց փոքորիկն ունին : Անոր համար ամենէն աւելի կասկածանաց աւարկայ ըլլալու են :

բերմամբ թաղ մը կորզող մարդուն , աղջիկ տալ : Սակայն Մէթթէրնիքի ճարտարութեան եւ նրբամտութեան համար ամէն բան դիւրին էր , դժուարին բառն իրեն անծանօթ էր : Իր բոլոր ճարտասանութիւնն ու հրապոյրներն երեւան հանեց ընտանեկան գործով մը քաղաքական մէծ ձեռնարկութեանց պատճառ ըլլալու :

«Ոչ ոք գիտէ , կ'ըսէ Բաօլի Շանեի կոմսը , իր պատմութեան մէջ , » ոչ ոք գիտէ թէ Մէթթէրնիք ինչ բառէր գտու զ'Կոյսը մխիթարելու , բայց դիւրին է դուշակել թէ ըսած ըլլայ իրեն , Տէր այս գործին մէջ Ձեր Վեհափառութիւնը երկու շահ ունի նկատելու , հօր մը եւ վեհապետի մը շահը . իբրեւ Հայր չ'էք ներէր որ Հապսպուրիկի գերդաստանին շառաիղճ խնամութիւն ընէ քօրսիքացի զինուորականին հետ , այլ իբրեւ վեհապետ պէտք չ'է զլանաք ձեր աղջկան ձեռքը այն դիւցազին՝ որոյ դէմ տասներկու տարի շարունակ մաքսուեցաք առանց զ'այն յաղթելու եւ թերեւս աս տոթիւ Ձեր Վեհափառութեան կամաց հնազանդ գործի մը ըլլայ : Արդ հայրենեաց շահերը՝ անտարակոյս եմ որ Ձեր Վեհափառութեան զարմին շահերէն նախամեծար կը համարիք : Որչափ ծանր ալ ըլլայ ինձ Ձեր խոնարհ հպատակին , այսպէս խօսիլ , հարկը կ'ստիպէ զ'իս ըսել թէ պէտք է Ձեր դուատորը՝ Եւրոպայի խաղաղութեան գրաւականն ըլլայ եւ ի սէր հայրենեաց ընդունի ինչ որ բախտն իրեն համար կը տնօրինէ :

Վերջապէս Մէթթէրնիք՝ ամենուն իր հասկցած լեզուն խօսելով՝ յաջողեցաւ : Ամուսնութիւնը կատարուեցաւ եւ Մարի-Լուիզ իշխանուհին 1810 Ապրիլ 2 ին հանդիսաւոր կերպով Պաղլիոյ Կայսրուհի եղաւ : Մարդ մը՝ որ այն ատեն հարսանեաց արտագոյ կարգի շուքը տեսնէր՝ չ'էր կրնար միտքէն անցնել թէ

այս փայլը մարը մտնող արեւուն գեղեցիկ փայլին կընմանի եւ թէ հեռու չ'է այն ժամը ուր աս մեծութեան վերջը պիտի գար եւ կեսարու անկման ժամը հնչէր :



Պ.

ԱՆԿՈՒՄՆ ՆԱԲՈՒԷՅՈՒՆԻ ԱՌԱՋՆՈՅ

Գաղղիոյ Լուի ԺԱ. թագաւորը՝ որ խորամանկ ու նրբամիտ վեհապետ մ'էր եւ իր երկդիմի ընթացքին շնորհիւ ամեն ձեռնարկութեանց մէջ յաջողած էր, մահուան (¹) անկողնոյն քով իր որդւոյն սա առածը ըսաւ իբր պատուէր « ով որ իր դիտաւորութիւնը չ'է կարող թագուն պահել, չ'կրնար տիրել » :

Աս առածը Մէթթէրնիքի համար քաղաքական եւ վարչական վարդապետութիւն մ'էր : Մէթթէրնիք՝ Նաբօլէօնի ամուսնութենէն մէկ շահ մը կ'ըսպատէր, զ'այն իբր Աւստրիոյ բազուկը դործածել ընդդէմ Եւրոպայի զօրաւորագոյն տէրութեանց եւ եթէ այս՝ անկարելի ըլլար, աս խնամութեամբ զ'այն քնացնելով եւ անոր վստահութիւնն ստանալով զ'ինքն անանկ վիճակի մը հասցնել որ անկարող ըլլար համազգային իրաւունքն ոտնակրիս ընելու :

Նաբօլէօն մեծ զօրութիւն մը կը ներկայացնէր, արդէ Մէթթէրնիքի ջանքերը կը ձգտէին կամ այս զօրութիւնը յօգուտ իրաւանց գործածել եւ կամ ա-

(¹) Լուի ԺԱ. ի ըրած մէկ բանի խարդաւանց հետաքրքրական պատմութիւնը՝ Ուալմէր-Սքոթ Անգլիացի վիպասանն ըրած է իր Դանդէն Տիւրվար վիպասանութեան մէջ : Աս վէպին մէջ պատմուած մանրամասնութիւնները, զօրօրինակ Լուի ԺԱ. ի Աքբայ Իպրաքօֆ հայ աստեղագետին գուշակութեանց զիմեքը կայլն շինծու եւ բայց ընդհանրապէս պատմական մասն իբրաւ է : Լուի ԺԱ. մեռած է 1830 Յոլանտո 30 ին :

նոր դէմ եւս առաւել մեծ զօրութիւն մը յառաջ բերելով աշխարհի խաղաղութիւնն ապահովել :

Աւստրիա՝ Եւրոպայի կեդրոնը գտնուելով նախ Ռուսիոյ մեծութենէն կը վախնար իր արեւելեան սահմաններուն համար, մանաւանդ Գանուբի նաւարկութեան նկատմամբ որոյ ազատ նաւարկութիւնն աս երկրին տուրեւառիկ բարգաւաճութեան երաշխիքն է : Միւս կողմէն իբրեւ Գերմանական տէրութիւն՝ Բրուսիոյ Գերմանական միութեան վրայ սնուցած զաղափարներէն կը կասկածէր : Ուստի Նաբօլէօնի դաշնակցութիւնը օգտակար կըլլար իրեն առաջին առնելու համար այն բաներուն որմէ կ'սխալ էր Աւստրիոյ նման խառն ազգերէ կազմուած տէրութեան մը կործանումը կամ հաստատութիւնը :

Մէթթէրնիքի քաղաքական սկզբունքնէր Աւստրիոյ երկու դրացի տէրութեանց Ռուսիոյ ու Գաղղիոյ՝ մերթ մօտենալ եւ մերթ հեռանալ, մերթ միւոյն յոյս տալ, մերթ միւսէն խոյս տալ, այլ միշտ թագուն պահել մէկէն այն յօրաբերութիւնները՝ որ միւսին հետ ունէր եւ ըստ կարելոյն Աւստրիոյ չեզոքութիւնը պահելով նոյն երկու տէրութեանց ալ վստահութիւնը միանգամայն զբաւել :

1812 ին Եւրոպայի քրիստոնեայ տէրութեանց մէջ երկու մեծ տէրութիւնք կային սրոց զօրութիւնն անվթար մնացած էր : Մին Գաղղիա՝ ամեն տէրութեանց յաղթելուն համար, Միւսը Ռուսիա՝ դէռ անոնց մէկէն յաղթուած (¹) շըլլալուն համար : Աս երկու տէրութեանց վեհապետները՝ իրենց ցամաքային մեծ զօրութեանն ապաւինած՝ թիւսիթի մէջ

(¹) Իրօք Ռուսաց Բրուսիոյ տուած օգնական զօրքը Ֆրիտլանտի պատերազմին մէջ յաղթուած էր Նաբօլէօնին, բայց Ռուսիոյ մէկալ դաշնակիցներուն նայելով աս տէրութիւնը դեռ Նաբօլէօնի գօրութիւնը զգացած չէր :

տեսակցելով մինչեւ անգամ զՍրեւելք եւ զՍրեւմուտք իրենց մէջ բաժնելու եղջերաքուստը յղացան : Արդարեւ աս նկատմամբ շարադրեալ ծրագիրը՝ որոյ վրայ կը խօսի գլխաւորաբար Պ. Թիէր իմաստուն պաշտօնեան եւ անտգիւտ պատմաբանը , աս ծրագիրը՝ կ'ըսեմ արժանի էր Աղեքսանդր Մակեդոնացոյն եւ Գարեհի մեջտեղ դաշնակցութեան պաշտօնագիր մ'ըլլալու :

Ըսինք թէ Անգղիա ծովային տէրութիւն մ'էր , ո՞վ արդ ցամաքային տէրութիւններէն պիտի արգէտելուր այն փառասէր քաղաքականութեան գործադրութիւնը որ աշխարհի յետագիւնութեան պատճառ պիտի ըլլար . ո՞վ պիտի կրնար ահեղ զորութեան մը դէմ իրաւանց ձայնը հնչեցնել , եթէ ոչ այն տէրութիւնը՝ որ իր զիրքով ու բանակով Անգղիոյ օժանդակ ըլլալու կոչուած էր եւ իր վարչութեան գլուխը Մէթթէրնիքի նման շրջաշայեաց մարդ մը ունենալու բախտն ունէր : Գոգցես Նախախնամութիւնն զՄէթթէրնիք աշխարհի տեսարանին վրայ կը հանէր աս գեղեցիկ գերը խաղալու համար :

Հեղինակաց ոմանք կ'ըսեն թէ Մէթթէրնիք՝ Ռուսօ-Ֆրանսական դաշնակցութեան նկատմամբ առիւծու ու վագեր միաբան որսորդութեան առակը օրինակ բերած ըլլայ , ըսելով թէ նոցա դաշնակցութիւնը մինչեւ այն ատեն կը տեւէ էրբ որք պատուեն :

Մենք չենք ուզէր հաւատալ թէ իշխան Մեթթէրնիք ինքզինք առակ խօսելու նուիրած ըլլայ եւ կամ առարկութիւն մ'ըրած ըլլայ Նաբօլէօն կայսեր փառասիրութեան որ ամեն բախտաւոր տէրութեան ու մարդկան կիրքը կրնայ ըլլալ : Մէթթէրնիք՝ ընդհակառակն դադանի կամ յայտնի Եւրոպայի մէջ ամեն անցածին զանազան եւ անհամար միջոցներով տեղեկութիւն ստանալով , կ'սկսէր գործել :

Նա՛ գիտէր թէ երկու զօրաւորը կամ երկու հասարք՝ մինչեւ աստիճան մը միայն կրնան միանալ եւ թէ վաղ կամ անազան նախանձը զիրենք կը բաժնէ : Մէթթէրնիքի հանձարը՝ քան զչափ բարձրացնել չէ՛ , եթէ ըսենք թէ աս մեծ քաղաքադէտը կը գուշակեր թէ արեւմտեան եւ արեւելեան մէծ տէրութիւններն իրարու պիտի բաղխեն եւ թէ առիթը պիտի գայ իր դիտած նպատակին հասնելու :

Ստուգիւ Ֆրանսա՛ սկսաւ Ռուսիոյն գանգատիլ , ըստ որում աս վերջին տէրութիւնը՝ չէր յարգած այն ցամաքային պաշարումը (blocus continental) զոր Նաբօլէօն Ա. հրատարակած էր :

Անգղիա՛ ծովերու կիշխէր եւ Լօր Չէթամ կ'ըսէր թէ առանց Անգղիոյ հաճութեան պէտք չէ Ովկէանու վրայ եւ ոչ թնթանօթ մ'արձակուի :

Գաղլիա՛ ընդհակառակն ինքզինք ծովերու պաշտպան հրատարակած էր : Աս դէպքը՝ երկու ազգերը իրարմէ բաժնող պատճառներէն մէկն էր : Նաբօլէօն 1806 Նոյեմբեր 21 ին Պէրլինէն հրովարտակ մը հանած էր որով Բրիտանական կղզիները պաշարման վիճակի մէջ կը հրատարակէր , այդ երկրին հետ ամեն տեսակ յարաբերութիւն կ'արգիլէր եւ կ'ստիպէր իւր դաշնակիցները որ իր այս հրովարտակին պատճառով իրենց համաձայնին , Աս էր հռչակաւոր ցամաքային պաշարումը : Երբ Ռուսիա՛ Գաղլիոյ հետ դաշնակցութիւն հաստատեց , խօստացաւ ցամաքային պաշարումը իր երկրին մէջ գործադրել . սակայն փորձը՝ ցուցուց թէ Անգղիոյ հետ տուրեւառիկ յարաբերութեանց դադարումը՝ Ռուսիոյ վաճառակա՛նութեան մեծ վնաս կ'ընէ , ուստի եւ Փէթրսպուրկի դահլիճը չէր կրնար իր խօստումը անթերի կատարել : Միւս կողմանէ Ռուսիա՛ Նաբօլէօնի դէմ տըրտունջ կ'ընէր պատճառելով թէ աս տէրութիւնը՝ զինք

ցնորական յոյսերով խաբած էր : Վերջապէս երկու տէրութիւնք՝ պատերազմ հրատարակեցին :

Մէթթէրնիքի համար Ռուսիոյ կամ Գաղղիոյ յաղթութիւնն եւ պարտութիւնը հաւասարապէս օգտակար էին : Գաղղիոյ եւ Ռուսիոյ մէջ պատերազմ մը զերկուսն ալ պիտի տկարացնէր եւ եթէ երկու տէրութեանց մէկն՝ յաղթող ըլլար այս յաղթութիւնն այնքան սուղ զնով պիտի ստանար որ չ'պիտի կարենար Եւրոպական գործոց վրայ մեծ ազդեցութիւն մ'ստանալ :

Նաբոլէօն Ա. Ռուսաց դէմ պատերազմ հրատարակելէ յառաջ մեծ բանակ մը պատրաստած էր եւ իր դաշնակիցներուն հրաւէր կը կարգար իրեն օժանդակելու :

Ռէնի դաշնակցութիւնը (1) որոյ դաշերէցն էր եւ որ Գերմանացի վեհապետներէ կը բաղկանար իրեն օգնական զնդէր պիտի տար : Աւստրիա՝ ստիպուած էր սա դաշնակցութեան մէջ մտնելու :

Արդ Մէթթէրնիքի գլխաւոր մտածութիւններ էր մինչեւ անգամ Ռուսիոյ դէմ պատերազմ հրատարակած ժամանակ այս տէրութեան (Ռուսիոյ) բարեկամութեան վրայ վստահ ըլլալ : Ինչ պիտի ըսեր կամ ի՞նչ պիտի ընէր հաւտացնելու համար Փեթէրսպուրկի դաշլիճը թէ Աւստրիա՝ ակամաց կը պատերազմի : Անշուշտ անոր պիտի ցուցնէր թէ Գաղղիայն վախելով բռնադատուած է ընդդէմ իր դաշնակցին սուր քաշելու :

Բոլորովին Ռուսիոյ բարեկամ ձեւանալով, Մէթթէրնիք կը մտածէր թէ անհնար է Նաբոլէօնի բան

(1) Նաբոլէօն բռնադատած էր զՖրանսուս Ա. Աւստրիոյ Կայսրը Գերմանիոյ Կայսրութեան հրաժարելու և Գերմանիոյ Կայսրընտուութիւնը թագաւորութեան վերածելով այս դաշնակցութիւնը մնած էր, ընդ իւր գահերիցումեամբ :

զլանալ, դարձեալ կը հաշուէր որ նոյն վեհապետն ինչպէս մինչեւ 1812, ամեն պատերազմէ յաջող ելած էր, նոյնպէս Ռուսաց դէմ հրատարակած մարտէն փառօք դուրս կ'ելնէ, եւ այն ատեն Նաբոլէօնէն վերջն ամենէն աւելի մեծ շահ ընողն Աւստրիոյ տէրութիւնը կ'ըլլայ, նախ իբրեւ Նաբոլէօնի դաշնակցաց ամենէն հզօրը, երկրորդ իբրեւ ինամի թիւլըրի արքունեաց :

Իսկ եթէ պարագայից անակնկալ դարձուածով Ռուսիա յաղթէր, այն ատեն իշխան Մէթթէրնիք՝ կրնար Ռուսիա մտնող Նաբոլէօնի բանակին ետեւէն՝ աւստրիական պահեստի բանակներ հանել եւ Ռուսիոյ ըսել թէ ինքը ուրիշ բանի համար չ'էր ուզած Ռուսօ-Գաղղիական պատերազմին մէջ մտնել, այլ մինակ Նաբոլէօնի պարտութիւնը դիւրացնելու կամ աւելի այս վերջնոյն շարժմանց հսկելու համար : Բաց ասկից իրեն կը մնար քաղաքականութեան ըսկզբունքը փոխելով պարտելոյն եւ յաղթողին մէջ միջնորդ ըլլալ ու իր բարոյական ազդեցութիւնը շատցնել :

Պարագաները՝ Մէթթէրնիքի հաշուց հակառակ ուղղութիւն մ'ունեցան, այլ իշխան պաշտօնեան՝ բախտին հարուած ին տակ ընկճող մարդ չ'էր : Իր հանճարը նորանոր հնարքներու կը դիմէր եւ իր վարմունքն իսկ զ'ինք դժար կացութեան մը կազատէր :

Լա Պալիոյէտ բարոյախօսն իր Նիսուրգիոյ գործին մէջ կ'ըսէ թէ հարկ է թշնամեաց հետ այնպէս վարուել իբր թէ օր մը մեզ բարեկամ պիտի ըլլային եւ բարեկամաց նկատմամբ սյնուէս ընթացք մ'ունենալ իբր թէ օր մը մեզ հետ պիտի թշնամանային : Լա Պալիոյէտի խրատը Մէթթէրնիք ոչ միայն ի գործ դրած այլ նաեւ իր քաղաքականութեան զլուարդ ուղղեցոյցն ըրած էր :

Նաբոլէօն ութ հարիւր հազար զօրքով՝ Նիէմէն գետն անցաւ եւ անգամ մը գետին եզերքը ոտք կոխելէ ետք՝ կը կարծէր թէ Ռուսիոյ եւ բոլոր Եւրոպայի տէր եղած է :

Նաբոլէօն՝ չէր գիտեր թէ մեծ վտանգ մ'իրեն կ'սպասէ այն Հիւսիսային ցուրտ երկրին մէջ : Մօսկուայի հրդէհը ստիպած էր զինքն աս քաղաքը ձգել եւ սառուցն ու ցուրտը Ռուսներէն աւելի իր բանակը ջարդած էր : Թշուառութիւնն իրեն ընկեր կ'ըլլար եւ ամօթահար Գաղիա կ'ըվերագառնար :

Այս աղէտը՝ իր դաշնակիցներն իրմէ կը հեռացնէր, Գերմանական փոքր տէրութիւններն Նաբոլէօնի թշնամեաց կողմ կը հակէին եւ Ռուսիա ու Բրուսիա իրենց մէջ դաշնագրութիւն մը կը կնքէին որով յանձնառւ կ'ըլլային ընդդէմ՝ Նաբոլէօնի պաշտպանողական եւ փնասողական դաշնակցութիւն մ'ընելու , որուն մէջ պիտի մտնար նաեւ Աւստրիա :

Բայց որովհետեւ աս տէրութեան գործոց գլուխը կը գտնուէր Մէթթէրնիք՝ գործերը չէին կրնար շուտ տեսնուիլ : Աս քաղաքագէտը՝ չէր ուզեր Աւստրիոյ քաղաքականութիւնն աշխարհի առջև խարդախ կարծեցնել, եւ առանց օրինաւոր պատճառի բաժնուիլ դաշնակցէ մը , որուն հետ կապուած էր , եւ այնպիսի բարեկամէ մը որ թշնամիէ մ'աւելի փնասակար թշնամի էր :

Արդարեւ Աւստրիա՝ Գաղղիոյ կամ լաւ եւս Նաբոլէօն Ա. նոյն հետ պատերազմելու զօրաւոր պատճառներ ունէր որոց ամենէն գլխաւորն այն հարուածն էր որ աս վեհապետին ընդունած էր եւ որուն աղբեցութեան տակ Յրամսուա Ա. կայսրը՝ ըստիպուած էր իր թագին ամենէն զեղեցիկ զօհարը, Գերմանիոյ կայսերական տիրութեան թողուլ, իր խաւրկական դաւառները ձգել եւ վերջապէս երկրորդա-

կան տէրութեան վեհապետի մ'ատրիճանն իջնալ :

Բայց Մէթթէրնիք՝ չէր կրնար աս պատճառները Գաղղիոյ հետ պատերազմելու առիթ սեպել , քանի որ միեւնոյն պատճառները՝ Նաբոլէօնի հետ դաշնակցելու արգելք չ'եղան : Իշխան պաշտօնեայն՝ թշնամութիւններն սկսելու աւելի հանճարեղ միջոց մը գտաւ , որով իր ընթացքը կատարելապէս կ'արգարանար :

Նախ գիտնալով որ Նաբոլէօն յետ իր մեծ պարտութեան , խաղաղութեան պէտք ունի , Աւստրիոյ միջամտութիւնն առաջարկեց երկու պատերազմող կողմանց : Մէթթէրնիք՝ Աւստրիոյ կողմէն Փարիզ զրկուած գեսպանին խտիւ պատուիրեց որ քարէխօսութիւն բառը չ'գործածէ վասնզի միջամտութիւն բառով կ'ուզէր հասկցնել թէ Գաղղիոյ եւ Ռուսիոյ մէջ հաշտութիւն մ'ընելու համար ըրած ջանքերը բարեկամի եւ դաշնակցի մը ջանքերն էին :

Մէթթէրնիք՝ Նաբոլէօնի պէս հանճարեղ վեհապետի մը վստահութիւնը գրաւելու դիտաւորութեամբ՝ Շվարցշնայերի իշխան մարտախաղը որ Գաղղիոյ բանակին օժանդակող Աւստրիական զնգերուն հրամանատարն էր , Փարիզ կը զրկէր եւ ասով կ'ուզէր միանգամայն զՆերոսպ վստահացնել :

Բաօլի-Շաննի կոմսը՝ սքանջելի կերպով կը բացատրէ այն փափուկ կացութիւնը որոյ մէջ կը գտնուէր Մէթթէրնիք աս թուականին , եւ որ իր քաղաքագիտական հանճարոյն փորձաքարն եղած էր :

« Մէթթէրնիք՝ կ'ըսէ նա առաջին եւ գլխաւոր գործ մ'ունէր ընելու , այսինքն արտաքին ձեւերով ջնջել մինչեւ անգամ այն կասկածը՝ որով կը կարծէին թէ թշնամի է այն թշնամոյն որոյ դէմ պիտի պատերազմէր , պէտք էր թափանցէր այն խորհուրդներու , կամ մտածութեան պատատը զ'որ գաղտնա-

պահուած թիւն կ'անուանեն , եւ գործէր այնպիսի եղանակաւ մը որով կարենար ակնհայտ տեսնել այն մարդուն դիտաւորութիւնները , զգացումները , կարծիքները , իղձերը եւ յոյսերը որուն գաղտնեաց թափանցել կը բաղձար : »

« Աս տեսակ մարտի մը մէջ՝ մարդ ընդդէմ իր թշնամոյն կը պատերազմի . բայց ասի զրեթէ մտգական պատերազմ մ'է ուր միտքն՝ ընդ մտաց կը մաքառի , ուր ամեն բան բարոյական է , ուր զէնքերը խորհրդոց մէջ պահուած են եւ այն ատեն անկից կ'եկնեն երբ պէտք ըլլայ զարնել այն տեղին որուն հասնելու դիտաւորութիւն կայ : Ասի իր հակառակորդին մտածութիւնը գրաւելու զայն իր անձնական գաղափարաց յարելու , շղթայելու . . . , սքանչելի արուեստն է : »

« Քաղաքագիտական հանճարոյ տէր մարդուն վրայ ամենէն աւելի զարմացում գրգռող բանն այն անբացատրելի հրապոյցն է , որոյ դէմ անհնար է որ մարդ , կարենայ ինքզինք պաշտպանել , որովհետեւ միշտ թովզութեան հնարքնէր կընկերանան անոր . հնարքնէր ըսելով կը հասկնամ մտաց ազատ եւ նուրբ յղացումները , ճարտարութիւնը , եւ դիմաց յարատեւ խաղը որ խաբէութեան առարկայ ընել ուզած մարդուդ զգացմանցն ու մտածութեանն համեմատ գործի մէջ կը մտնայ ու նոր երեւոյթ մը կ'ստանայ , հնարքներ ըսելով կ'իմանամ այն զարգարուն կամ անզարդ , համարձակ կամ կեղծ , անուշ կամ կծու հանդարտ կամ աշխոյժ լեզուն որ կը փոխուի ըստ մարդոց տեղեաց եւ պարագայից , այն դարանները զոր կը լարեն տգիտութեան , պարզութեան , անձնասիրութեան , սնասարծութեան , յանձնապատասնութեան եւ մարդկային սրտին ամեն տկարութեանց դէմ , վերջապէս հնարք ըսելով կ'իմանամ այն խորա-

մանկութեան միջոցները զոր մարդ կը յարմարցնէ շողջորթելու , խաբելու , հրապուրելու եւ տնջանօք ընդունել տալու համար այն կողմնակցութիւնը որմէ հեռանալ կը պարտաւորեն խոհեմութիւնը , շահն ու դատողութիւնը : »

« Ինչ մէծ ծանօթութիւն ունենալու է մարդկային սրտին վրայ եւ որքան հետազոտութիւն ընելու է բարոյական հանգամանաց եւ ընկերութեան մէջ ապրող մարդոց կրքերուն , որպէս զի մարդ՝ աս գիտութեան մէջ ճարտար հանդիսանայ , եւ որչափ երջանիկ էր Աւստրիոյ կայսրը աս խառնուածքին տէր մարդ մ'ունենալուն համար : »

Շանեի կոմսը՝ բոլորովին կեղծուպատիր քաղաքագիտութեան մը փիլիսոփայութիւնն ընելով՝ մեծ զարգացում մը կուտայ իր պատմութեան այն մասին որոյ առարկան է Մէթթէրնիքի այն հնարքները որոց չնորհիւ Աւստրիա օրինաւոր ձեւերով Քաղզիոյ դաշնակցութենէն բաժնուեցաւ :

Ստուգիւ երբ մարդ այս քաղաքագետին վարուց վրայ ճառէ անհնար է որ քանի մը խօսքով անցնի Մեթթէրնիքի այն ձեռնարկութեան վրայ որ իր քաղաքականութեան զուլս գործոցը կը համարուի եւ որ յ'ապուշ կըթեց քան զ'ինքն աւելի նրբամիտ դեսպանադետները :

Մէթթէրնիք՝ գիտղիոյ վարչութիւնն իր վրայ բոլորովին վստահացնելու համար խնդրած էր Ֆրանսոս Ա . կայսրէն որ ինքզինք Քաղզիոյ հակառակ ձեւացնէ , այնպէս որ պաշտօնէից խորհրդին մէջ մինչդեռ Մէթթէրնիք՝ Քաղզիոյ դաշնակցութեան կողմնակից կը հանդիսանար , իր վեհապետն՝ այլոց այսինքն նախարարաց մէծ մասին համակարծիք երեւալով , Ռուսիոյ եւ Բրուսիոյ հետ դաշնակցել կը բաղձար :

Սրդ Աւստրիա՝ աս հնարքով փամանակ կ'ստանար

նոր ու արտաքոյ կարգի պատերազմի պատրաստութիւններ տեսնելու : Գաղղիա՝ պիտի կարծէր թէ վիէննայի վարչութիւնն այս պատրաստութիւններն իրեն օգնելու համար կ'ընէ , եւ Ռուսիա՝ կը հաւատար թէ աւստրիական զեղերն իր բանակին աջակից ըլլալու համար կը շատնային :

Մէթթէրնիք՝ ապահոված էր զՌուսիա եւ իր դաշնակիցները Աւստրիոյ ճշմարիտ դիտաւորութեանց վրայ : Աւստրիա՝ որ Նաբոլէօնի հետ պատերազմելով այնչափ գաւառ կորուսէր էր ինչպէս , կրնար իր հին թշնամուոյն հետանկեղծ օրէն միանալ մինչդեռ Ռուսաց հետ միանալով իր ճշմարիտ շահերը պիտի պաշտպանէր եւ թերեւս կորուսած երկիրները վերստին առնէր : Այս էր Մէթթէրնիքի խօսած լեզուն երբ Ռուսիոյ դեսպանին հետ գաղտնի տեսակցութիւն մ'ունենար :

Միւս կողմանէ զՆաբոլէօն եւս առաւել վստահացնելու համար սկսաւ Գաղղիոյ Օթթօ դեսպանին ստառ կամ խաբուսիկ խոստովանութիւններ ընել : Յուցուց իրեն այն տեղեկագիրը որ Աւստրիոյ Պէրլինի արքունեաց քով ունեցած դեսպանէն ստացած էր եւ ուրուն մէջ Բրուսիոյ եւ Ռուսիոյ պատրաստութեանց վրայ զանազան տեղեկութիւններ կային , խնացուց իրեն թէ աս երկու տէրութիւնք հրաւէր կը կարդան Աւստրիոյ , իրենց դաշնակցութեան մէջ մտնելու , եւ թէ Աւստրիա՝ այս առաջարկութիւնը բացարձակապէս կը մերժէ :

Պ. Օթթօ՝ այս յայտնութեանց վրայ այնքան զարմացաւ որ առ իր տէրութիւնն գրած մէկ պաշտօնագրին մէջ զՄէթթէրնիք , այդ անձնաւորեալ խորամանկութիւնը , իրեւ միամիտ ոք կը ներկայացնէ որ իր ամեն գիտցածը անխորհրդաբար կը պատմէ եւ ուրուն սիրտը շրթունքներուն վրայ է :

Այլ Պարոն Օթթօ որչափ եւս աւելի զարմացաւ

երբ իմացաւ թէ խաբուած է այն մարդէն զոր համոզել կը կարծէր եւ որուն զանցառիկ եւ առեբեւոյթն պարզմտական խօսակցութեան , մեղմիկ ձայնին ու զեղեցիկ հանգամանքներուն խաբուած էր :

Սաբելն արդարեւ դէշ բան է , բայց անանկ ստեն մը կամ անանկ վիճակի մը մէջ ուր մարդ խաբեբայութեան առարկայ ըլլալու ենթարկեալ է ինչպէս կրնայ առանց վնասու խղճաւոր ուղղութիւն մը պահել (!) : Ասկէց զատ Մէթթէրնիքի գործը՝ ճշմարիտն ըսելով խաբեբայութիւն մը չէր , որովհետեւ ինչ որ Գաղղիոյ դեսպանին պատմած էր (այսինքն Ռուսիոյ ու Բրուսիոյ դաշնակցութեան վրայ մանրամասնութիւններ) իրաւ էր , եւ իր բոլոր ընթացքն աւելի զգուշութիւն ու խոհեմութիւն կը ցուցներ քան թէ նենգութիւն :

Վերջապէս Աւստրիա՝ աղէկ մը գինելէ եւ իր սահմանները 150,000 զօրք զրկելէ ետք , սկսաւ բոլորովին Նաբոլէօնի եւ Ռուսիոյ ու Բրուսիոյ մէջ միջամտութիւն ընել եւ ինքզինք խաղաղութեան կողմնակից ցուցնելով զՆաբոլէօն չափաւորութեան հրաւիրել : Բայց Մէթթէրնիք՝ գիտէր որ Աւստրիոյ բռնած այս գոռող դիրքը ծանր պիտի գայ Նաբոլէօնի , միանգամայն աս վեհապետն առաջարկեալ պայմանները չպիտի ընդունի : Սակայն ասով մէկ շահ մ'ունէր , այն է Նաբոլէօնէն բաժնուելու պատրուակ մը գտնել , աշխարհի առջեւ զայն յանցաւոր ընել եւ ցուցնել թէ նա է պատերազմի չարեաց շարժառիթ : Նաբոլէօն թէեւ աս թուականին զՔալէրան իրմէ հեռացուցած էր , թէեւ իր խորհրդականները՝ այդ քաղաքագիտին բարձրութեան չէին հասնէր , այսու ամենայնիւ

(!) Մաքիավել որ զարմանալի առաւնէր ունի « Անոնք որ կ'ըսէ չարերուն մէջ բարի են վաղ կամ անազան կը կորսուին : »

բաւական խոհեմութիւն ունէր դաւէն զգուշանալու համար, հետեւաբար հաւանեցաւ հաշտութեան պայմաններուն վրայ բանակցելու եւ աս ընթացքով իր պատերազմասէր դիտաւորութիւնները ծածկելու: Աս բանակցութեանց համար բոլոր Եւրոպայի տէրութիւնք՝ երեսփոխաններ պիտի ղրկէին Փրակա՝ ուր դեսպանաժողով պիտի գումարուէր: Մէթթէրնիք՝ կը ջանար զանազան պատճառներով դեսպանաժողովն անկարելի ընելու եւ վերջապէս բանակցութեանց ձեւին վրայ այնպիսի խնդիր մը հանեց որ Նաբօլէօն՝ չ'կրնալով ընդունիլ Նորէն պատերազմն անհրաժեշտ եղաւ:

Արդ Աւստրիա՝ կրցաւ իր դաշնակցէն զատուիլ եւ անոր փառասիրութիւնն ու պատերազմասէր քաղաքականութիւնը պատճառ բռնելով՝ Նաբօլէօնի դէմ Նորէն կազմուած դաշնակցութեան մէջ մտաւ (1):

Աւստրիոյ խորհրդաւոր վարանումը՝ այնչափ օգտակար եղեր էր այս տէրութեան, որ դաշնակիցք՝ (Ռուսիա, Բրուսիա) զ'այն բոլորովին իրենց յարելու համար դաշնակցութեան բանակին վերին հրամանատարութիւնն Աւստրիոյ յանձնած էին:

Դաշնակցութեան բանակը՝ աղէկ կազմուած ալ չ'ըլլար Նաբօլէօն ոչ եւս կրնար դիմանալ: Գաղղիա՝ տասնութ քսան տարի պատերազմելով իր զօրութիւնն սպառած էր: Այսու ամենայնիւ Նաբօլէօն 1815ին Սաքսօնիոյ մէջ տրուած պատերազմներուն մէջ առաւելութիւններ ունեցաւ, չնորհիւ իր զինուորական հանճարին: Սակայն դաշնակցութեան բազմաթիւ գնդերը՝ խել մը յաջող ճակատամարտերէ վերջը 1814 Մարտ 30ին Փարիզ մտան, որ անձ-

(1) Աս դաշնակցութիւնն երեք տէրութիւնք՝ Ռուսիա Բրուսիա և Աւստրիա ստորագրած էին 1815 Սեպտ. 9ին:

նատուր եղած էր: Նոյն տարւոյն Ապրիլ 11ին Նաբօլէօն՝ դաշնակից վեհապետաց ստիպմամբ, զ'իւր հրաժարական կ'ստորագրէր եւ քիչ ատենէն Լուի ժ.Բ. կուգար իր նախնեաց աթոռը բազմելու:

Թէեւ Նաբօլէօն՝ էլպա կղզիէն՝ ուր դաշնակից վեհապետք զ'ինք դրկած էին, Նորէն Գաղղիա դարձաւ, այլ իր հարիւր օրուան կայսրութեան մէջ, դաշնակցաց դէմ վարած պատերազմը՝ նմանապէս անյաջող ըլլալով Լուի ժ.Բ. վերջնական կերպով Փարիզ եկաւ:




Ե.

ՄԵԹԹԵՐՆԻՔ ՅԱՐՔԱՅԱԺՈՂՈՎ ՎԻԵՆՆԱՅԻ

Այսպէս Մէթթէրնիք՝ ընդդէմ Նաբօլէօնի կազմեալ Եւրոպական դաշնակցութեան ոգին՝ իր խնաստուն քաղաքականութեամբ եւ ճարտար ընթացքով կը տապալէր այն մարդը որ փառքն արիւնհեղութեան մէջ կը փնտրէր եւ տասնութ քսան տարի արունակ Եւրոպայի դիկտատորն եղած էր: Այսպէս Մէթթէրնիք կ'ընէր ինչ որ իր նախորդները, պաշտօնեայք Աւստրիոյ, չէին կրցած ընել, այսինքն դաշնակից տէրութեանց մէջ կատարեալ համաձայնութիւն պահել եւ զ'Եւրոպա Նաբօլէօնին դէմ պաշտպանել:

Սակայն դաշնակից վեհապետներուն Փարիզ մտնելէն յետոյ իշխան պաշտօնեան եւս առաւել դժար եւ փափուկ դեր մ'ունէր լազալու: Դաշնակից տէրութեանց զօրաւորագոյնը Ռուսիա էր, հետեւաբար այս տէրութիւնն իր ազդեցութիւնն ոչ միայն Գաղղիոյ, այլ նաեւ իր դաշնակցաց վրայ կը տարածէր:

Ռուսաց Աղեքսանդր Ա. կայսրը՝ ինքզինք բանաստեղծական ներշնչութեանց տուած մարդ մ'էր:



Ազատական գաղափարներով սնած՝ աշխարհի ամենէն աւելի միահեծան տէրութեան գլուխն էր անցած : Դեռ երիտասարդ ըլլալով, իր ազնուական ձեւերուն եւ սիրուն բնաւորութեան միջոցաւ Փարիզու մէջ ամենուն համակրութիւնը գրասած էր : Արդ եթէ Աղեքսանդր Կայսրը ինչպէս նաեւ իր խորհրդականները՝ չ'ունէին (ինչպէս բոլոր պատմագիրքը կը հաստատեն) այն քաղաքագիտական հանճարը որ պարագաներէն օգուտ կը քաղէ, գոնէ անանկ դիրքի մը մէջ կը գտնուէին որ իրենց մեծ առաւելութիւններ կուտար :

Ուստի ինչպէս որ Աւստրիա՝ իբրեւ կեդրոնական տէրութիւն՝ աշխատած էր Նաբոլէօն Կայսեր արեւմուտքի վրայ ունեցած գաղափարներուն դէմ կենալ, նոյնպէս պարտաւոր էր Ռուսիոյ վառասիրական երազներն օդն հանել եւ զ'այն ճարտարութեամբ չափաւորութեան հրաւիրել :

Շատ պատմաբաններ Նաբոլէօնի անկման եւ աս դարու սկիզբներն անցած դէպքերուն պատմութիւնն ընելով՝ խիստ քիչ բան կը խօսին Մէթթէրնիքի վրայ, որ ամեն Եւրոպական կարգադրութեանց մասնակից եղած էր : Ընդհակառակն կը ջանան Եւրոպայի մէջ անցած դէպքերուն պատճառ ուրիշ տէրութեանց վեհապետներն ու պաշտօնեաներն համարիլ : Լամարթին իր պատմութիւն Ռուսիոյ գրքին ութերորդ իններորդ եւ մասամբ իւրք տասներորդ գրքերը Աղեքսանդր Ա. նոյն թագաւորութեան պատահարներուն նուիրելով՝ կ'ուզէ ցուցնել թէ այս Կայսեր վեհանախնութիւնը զ'որ Ագամեմոնոն արքայից կ'անուանէ, զ'Գաղղիա, յետ անկման Նաբոլէօնի, ազատած ըլլայ Եւրոպայի վրիժուց հարուածներէն :

Իսոյք ոչ միայն իրողութիւնք՝ լուրջ պատմաբանք՝ այլ նաեւ Մէթթէրնիքի քաղաքականութեան վրայ

հայեցուած մը բաւական են համոզելու թէ այս քաղաքագէտն էր որ Թալէրանի հետ միացած՝ կրցաւ Գաղղիոյ ամբողջութիւնը (՝) պահել :

Մէթթէրնիքի խորհուրդները շատ խորին էին եւ իր հեռատես քաղաքականութիւնը՝ չէր կրնար չ'տեսնել այն վտանգը որ Եւրոպայի հաւասարակշռութեան եղծումէն կրնար ծագիլ :

Տեսնե՛ք ուրեմն թէ ինչ միջոցաւ յաջողեցաւ Եւրոպական հաւասարակշռութեան հիմունքը դնելու :

Նաբոլէօնի պատերազմները Եւրոպայի քաղաքական աշխարհացոյցը բոլորովին փոխեր էին : Հարկ էր տէրութեանց սահմանները նորէն գծել եւ Եւրոպայի նոր կազմակերպութիւն մը տալ : Դաշնակից տէրութիւնք սրաշեցին աս նպատակաւ արքայաժողով գումարել ի Վիէննա : Աս ժողովը որ ոչ միայն դեսպանագիրաց եւ արքայից խորհուրդ մ'էր, այլ նաեւ կըրնար իբրեւ ազգաց դատարան մը համարուիլ, աշխարհի ուշադրութիւնն իր վրայ կը հրաւիրէր : Անձնիր տէրութիւն կ'ուզէր անոր մէջ գտաւ մը շահիլ, անձնիր դեսպանագէտ իր նրբամտութիւնն երեւան հանել, անձնիր վեհապետ իր թագին փայլը շողացնել, Թողունք սակոյն որ այս ժողովին նկարագիրը Մէթթ-տը-Բօժէ տը Լա-Լանտ ընէ այն ընտիր ոճով որով գրած է իր Բրուսիոյ պատմութիւնը :

« Վիէննայի արքայաժողովին մէջ Եւրոպիոյ աշխարհացոյցը վերակազմեցին զ'որ Նաբոլէօնի յաղթական սուրը չորս անգամ տակն ի վերայ ըրած էր : Վեհապետք՝ որք անձամբ բանակցելու նախազուշուրութիւնն ընելով՝ նախագահութեան կամ գերադատութեան խնդիրներն յուղելու զգուշացան (խնդիրն

(՝) Գաղղիոյ ամբողջութիւնն ըսելով չ'ենք հասկնար այն երկիրները զ'որ Նաբոլէօն Ա. գրաւած էր և որք վերստին իրենց առջի տէրերուն դարձան :

էր որք Ութրէլսթի մէջ մեծ ժամավաճառութեան պատճառ էին եղեր) եւ արդի քաղաքագիտութեան իշխաններն՝ իրենց մէջ երեք Գերմանո-Ռուսական տէրութեանց պահանջումներուն վրայ վիճաբանութիւն պիտի ընէին : Աղեքսանդրի կ'օժանդակէր Նեսսելրօտ , Լուի ՓԼ. Ղրկած էր զ'Թալէրան , Անգղիա զ'Քասթլլըրիկ . Մէթթէրնիք՝ զ'Աւստրիա կը պաշտպանէր եւ Հարտէնպէրկ զ'Բրուսիա :

« Ռուսիա՝ աս Եւրոպական դատարանին մէջ գերագունութիւնն ունէր եւ անոր աշխատութեանց տնօրինութիւն կ'ընէր , կ'ուզէր որ դաշնադրութիւնն ստորագրող տէրութիւնք՝ ընդունին այն պայմանները զ'որ կանխաւ որոշած էր , պայմաններ՝ որք թէեւ անարդար էին , այլ սակայն իր քաղաքական նպատակը կ'իրականացնէին , այն է գերագահ ազդեցութիւն Հիւսիսոյ ի վերայ Հարաւային տէրութեանց , Բողոնիոյ ստացումը , եւ Ռուսիոյ Բրուսիոյ հետ դաշնակցութիւնը , որպէս զի Աւստրիոյ ազդեցութիւնն իսպառ բնաջինջ ըլլայ : Բրուսիա ալ իր կողմանէ զ'ժաքսօնիան գրաւելու յոյսը կը տածէր :

« Փրակայի ժողովոյն մէջ (1813 Օգոստոս) վարսովիի դքսութիւնը (1) Աւստրիոյ , Բրուսիոյ եւ Ռուսիոյ մէջ բաժնուեցաւ . բայց 1815 ին պարագաներն՝ աս վերջին տէրութեան անանկ իշխանութիւն մը տուեր էին որ աս դքսութեան մեծ մասը խնդրելու իրաւունքն մի միայն իրեն սեպակահանեց . միւս կողմանէ Բրուսիա՝ որ աս կերպով իր երկրին մէկ մասը կը կորսնցէր , իոխարէն՝ ամբողջ Սաքսօնիոյ թագաւորութիւնն ստանալ կ'ուզէր :

« Աղեքսանդր եւ Կլյօմ Գ. (2) Համաձայն էին . ա-

(1) Աս դքսութիւնը կազմած էր Նաբոլէօն Ա. Լեհաստանի մէկ քանի գաւառներէն :

(2) Կլյօմ Գ. այն ստենուան Բրուսիոյ Թագաւորն էր :

սի՝ երկու տէրութիւնները կապող դաշնակցութեան վաւերացումն եղաւ , դաշնակցութիւն՝ որ առերեւոյթ անհամաձայնութեանց հակառակ միշտ շարունակեց եւ դեռ մեր օրերը կը տեւէ » (3) :

Մէթթէրնիք ալ ճիշդ աս դաշնակցութեան զօրութիւնը կտորել կ'ուզէր , եւ իր նպատակին հասնելու համար պէտք եղած օժանդակութիւնը գտաւ : Թալէրան՝ խելացի քաղաքագէտը՝ որ 'ի սկզբանէ կայսրութեան Գաղղիոյ , Նաբօլէօնի խորհուրդ տուած էր Աւստրիոյ բարեկամութիւնը խնդրելու (4) , Մէթթէրնիքի սկզբանց թափանցեց . Մէթթէրնիք՝ եւ Թալէրան վիէննայի արքայաժողովոյն մէջ զ'իրար կ'ամբողջացնէին . Մէթթէրնիք՝ կ'որոնէր պաշտօնեայ մը որ այս՝ արքայից ու զիւանագիտաց ժողովին մէջ իրեն օժանդակէ պահպանելու համար Աւստրիոյ շահերը որ մեծ զօրութիւն մը չ'ունէր . Թալէրան՝ ալ իր կողմէն պէտք ունէր այնպիսի օգնականի մը որ Գաղղիոյ իրաւունքներն յարգել տայ , Գաղղիոյ՝ որ յաղթուած էր եւ յաղթողաց կամքն յարգելու ստիպուած :

Հինգ տէրութիւնք Աւստրիա , Գաղղիա , Բրուսիա , Ռուսիա եւ Անգղիա որք վիէննայի արքայաժողովոյն մէջ ներկայացած էին Եւրոպական հնգապետութիւնը (pentarchie) կը կազմէին որ ժամանակակից դեպաց մէջ մասնակցութիւն մ' ունեցաւ : Աս հնգապետութեան մէջ Ռուսիա Բրուսիոյ հետ միացած առաջին տեղին ունէր : Արդ Մէթթէրնիք՝ գիտնալով որ աս պարագան Անգղիոյ ազդեցութեան ալ կը դպչի 1815 Յունվար 6 ին Թալէրանի ներշնչութեամբ գաղտնապէս երից դաշնակցութիւնը կազմեց : Աս

(3) Տես . Մէլր—տը—Բօժ—տը—Լա լանտ . պատմութիւն Բրուսիոյ . զԼ . Բ . Արքայաժողով վիէննայի :

(4) Տես Լամարձին . պատմութիւն Ռուսիոյ Հասօր Բ .

դաշնակցութեամբ Անգղիա, Աւստրիա եւ Գաղղիա միաբան պիտի գործէին, այն Եւրոպական մեծ խնդրոյն մէջ այսինքն Սաքսոնիոյ խնդրոյն մէջ որ արքայաժողովոյն մէջ կը յուզուէր, միանգամայն հակադէմ պիտի ձեւացնէին Հիւսիսային հզօր դաշնակցութեան:

Սաքսոնիոյ խնդիրը լուծելու համար Մէթթէրնիք՝ Յունվար 6 ի դաշնադրութեան համեմատ առաջարկեց որ Սաքսոնիան երկու մասի բաժնուի, մին՝ Սաքսոնիոյ Ֆրէտէրիկ—Օկիւսթ թագաւորին թողուի եւ միւսը՝ Բրուսիոյ անցնի:

Թալէրանի իր կողմէն աս խնդրոյն այնչափ մեծ կարեւորութիւն տուած էր որ 1814 Գեկտեմբեր 19 ին առ Մէթթէրնիք ուղղած ծանուցագրին մէջ անոր վրայ այսպէս կը խօսի:

« Սաքսոնիոյ խնդիրը՝ գլխաւոր խնդիր դարձաւ, վասն զի ուրիշ որ եւ է խնդրոյ մէջ օրինաւորութեան եւ հաւաստակալութեան սկզբունքները միահաղոյն եւ այս աստիճան վտանգի եմ թակոյ չեն: Աս թագաւորութեան նկատմամբ որոշուած տնօրէնութիւնն օրինաւոր գտնելու համար պէտք է ընդունիլ իբր ճշմարտութիւն թէ թագաւորը կրնան դատուիլ, թէ ով որ կ'ուզէ վաննք դատել եւ անոնց ստացուածքն զրաւել կրնայ վաննք դատատանի ենթարկել, թէ թագաւորը՝ կրնան դատուիլ առանց ձայն բառնալու կամ պաշտպանուելու, թէ իրենց դերդատտանն ու ժողովուրդներն վիրենք դատապարտող վճռոյն մէջ պարիակեալ են, թէ յ'արքունիս գրաւելու օրէնքը՝ որ քաղաքակիրթ ազգաց օրինագրքէն մերժուած է, պէտք է, ժ-Թ՝ ըզ դարուն մէջ, Եւրոպայի հանրական իրաւունքէն նուիրագործի ու վաւերանայ, իբր թէ թագաւորութեան մը գրաւումը խրճիթի մը գրաւմանէն պակաս նոզկալի

եղած ըլլայ, թէ ժողովուրդը՝ իրենց վեհապետներէն տարբեր իրաւունք մը չ'ունին եւ թէ ժողովուրդը կալուածքի մը խաչինքին կը նմանին, թէ վեհապետութիւնը մի միայն աշխարհակալութեան միջոցաւ կ'ստացուի ու կը կորսուի, եւ թէ, ՚ի հակիրճ բան, զօրաւորագունին համար ամեն բան օրինաւոր է »:

Ինչպէս աս հռչակաւոր պաշտօնագրին լեզուէն ալ կ'երեւնայ Մէթթէրնիք եւ Թալէրան իրենց Անգղիոյ հետ կապած դաշնակցութիւնը բողոքովն թագուն պահելով Սաքսոնիոյ խնդիրը պատրուակ ըրած էին աւելի ծանրակշիւ խնդիրներն մի եւ նոյն եղանակաւ յուզելու եւ Հիւսիսային դաշնակցութեան (Իիկ տիւնօն) դէմ մաքառելու եւ օրինաւորութեան, իրաւանց, ու հաստատակալութեան թուականի մը դարագլուխը բանալու համար:

Պէտք է գիտնալ որ Մէթթէրնիք՝ աս դիւանադիտական խաղն անանկ մարդոց կը խաղար որ ոչ միայն բազմաթիւ սուխներու պատկառելի խումբ մը իրենց նեցուկ ունէ՞, այլ նաեւ քաղաքագիտէ մը պահանջուած սովորական յատկութիւններն առաւելապէս ստացած էին: Զորօրինակ կ'ուսնեսեւոտ (1) որ վերջին տարիներս մեռաւ անանկ համբաւ մ' ստացեր էր որ ոմանք վայն քաղաքագիտաց նեստոր կը կոչէին եւ Հարտենպերկ Բրուսիոյ պաշտօնեան վ'որ պատմագիրք— բաց ՚ի կիրվինուսէն— ճարտար կը դտնեն: Մինչեւ անգամ ար Պոմօն—Վասի կ'ըսէ թէ նաբօլէօն Ա. Հարտենպերկէն կը վախնար վասն զի անոր ճարտարութիւնն ու նրբամտութիւնը կը ձանչնար (2):

(1) Արեւելեան պատերազմին առեն Մեծ Օրինապետ (Կրան-Շանսըլի) էր Ռուսիոյ:
 (2) Հարտենպերկի 1750 Մայիս 31 ին Հաննովեր ծնած էր: Մեռաւ 1821 ին ՚ի ձեռօվա:

Սակայն Մէթթէրնիքի հրապոյրներէն խաբուած , զ'Աւստրիա շահելու կամ թէ ուրիշ որ եւ է զիտաւորութեամբ Հարտէնպէրկ' Մէթթէրնիքի բազկաց մէջ նետուեցաւ Սաքսօնիոյ խնդիրը լուծելու համար , եւ կը թախանձէր Աւստրիոյ մեծ դիւանապետը , « զ'Բրուսիա ազատելու միջոցներ գտնել , զ'Բրուսիա որ որեւէ պարագայի մէջ չ'էր կրնար աս սոսկալի մարտէն ամօթաւհար տկարութեան մը վիճակին մէջ դուրս ելնել » :

Մինչդեռ Հարտէնպէրկ' այսպէս կը խօսէր Մէթթէրնիքի հետ , մեծ Դիւանապետը պատ ի պատ ճամբաներէ երթալով Սաքսօնիոյ խնդիրը այնպէս մը խառնակած էր որ իրաւքնէ կը շիտթէր զ'Հարտէնպէրկ' որ ասանկ պարզապէս եւ ուղղակի իրեն կը դիմէր որպէս զի քակուի այն հանգոյցը զ'որ Մէթթէրնիք եւս առաւել կը խառնակէր :

Եւրոպական Հնգապետութիւնը զ'Սաքսօնիա բաժնելու պատրուակ մը գտէր էր , այսինքն այն վնասը որ Սաքսօնիոյ թագաւորը դաշնակից վեհապետաց տուած էր Նաբօլէօն Առաջնոյն նիզակակից գտնուելով : Սակայն Թալէրան' առ Մէթթէրնիք ուղղած ծանուցագրին մէջ աս թագաւորն այնպէս մ'արդարացուցեր էր եւ անոր դատն այնպիսի կերպով մը կը պաշտպանէր ու պաշտպանել կուտար որ նոյն իսկ Ռուսիա դժուարութիւն կը կրէր իր ուզած կերպով լուծելու այս խնդիրը որոյ լուծմանէն վերջը պիտի ջանար Բօլօնիոյ խնդիրն ալ իր ուղածին պէս լուծելու :

Մէթթէրնիք' նկատելով որ իր խաղէն սպասած արդիւնքը քաղել կ'սկսի , փոխանակ Հարտէնպէրկի մտերմական պատասխան մը տալու հեղեանկան կերպով մը ինչպէս կ'ըսէ Կերվինուս Սաքսօնիայի հինգերորդ մասը միայն Բրուսիոյ ձգել կ'ուզէր :

Ասով ալ գոհ չ'ըլլալով բոլորովին զ'Ռուսիա Բրուսիայէն բաժնելու եւ իր ազդեցութիւնը ընդարձակելու համար նոր հնարքի մը զիմեց : Նետելուս կոմանն առանձին գտնելով խորամանկ ոգւով մը Ռուսաց կայսրէն եւ անոր միւս պաշտօնեաներէն գաղտնի , հետք բանակցեցաւ որպէս զի խնդիրն իր ուզած կերպով կարգադրել տայ : Միեւնոյն ժամանակ իր սովորական երկդիմաբան քաղաքականութեանն հետեւելով , առանձին տեսակցութիւն մ'ունեցաւ Ռուսաց Աղեքսանդր Կայսեր հետ եւ խօստացաւ իրեն Ռուսիոյ Լեհաստանի նկատմամբ ունեցած բաղձանքներուն կատարմանն օգնել , եթէ Կայսրը յանձնառու ըլլայ Աւստրիոյ հետ արգիլելու , որ Բրուսիա' Սաքսօնիայէն եւ ոչ ավ մը հող առնէ : Միւս կողմանէ՝ Սաքսօնիոյ թագաւորութիւնը Բրուսիացւոց կը խօստանար , եթէ ատնք վիէննայի դահլիճին հետ միանային , Ռուսիոյ տէրութեան Փօլօնիոյ վրայ սնուցած դիտաւորութեանց զործադրութիւնը խախտնելու :

Սակայն Ռուսաց Աղեքսանդր Կայսրը՝ արթուն գտնուելով չ'հաւատաց Մէթթէրնիքի տուած խաբուսիկ յոյսերուն եւ անոր խարդաւանքը լուծելու համար Բրուսիոյ Հարտէնպէրկ պաշտօնէին հաղորդեց այն բոլոր առաջարկութիւնները զ'որ Մէթթէրնիք իրեն ըրած էր :

Բայց որովհետեւ այս խօսքերը առանձին տեսակցութեանց մէջ անցած էին եւ միայն դահլիճի մը պատերն իրենց վկայ ունէին Մէթթէրնիք՝ զանոնք ուրացաւ , Հետեւաբար կ'ըսէ Կերվինուս օգոստափառ ժողովը , Կայսեր մը , եւ ուրիշ Կայսեր մը պաշտօնէին , զ'իրար սուտ հանելուն վկայ կը հանդիսանար :

Դարձեալ Կերվինուս կը պնդէ թէ Աւստրիոյ մեծ Դիւանապետը՝ զ'Ռուսիա Բրուսիայէն բաժնելու

այն աստիճան մտադիր եղած էր որ Բրուսիոյ Հարտէնպէրկ պաշտօնէին (Անգղիոյ ներկայացուցչին ներկայութեանն) Ռուսիոյ դէմ արտասանած թշնամաւիր խօսքերը Աղեքսանդր Կայսեր պատմեց : Իսկ Աղեքսանդր , ըստ Կերվինուսի , աս նենգամիտ զրոյցներն արհամարհելով յայտարարութիւն ըրաւ Ֆրանչիսկոս Կայսեր թէ ալ չ'ուզեր աս պաշտօնէին (Մէթթէրնիքի) հետ բանակցիլ :

Բայց ըստ մեզ աս վերջին տեղեկութիւնը զ'որ Կերվինուս կուտայ չ'եմք կարծեր որ ստույգ եղած ըլլայ , ըստ որում դժուարին է ենթադրել որ Աղեքսանդր Մէթթէրնիքէն այս աստիճան խորչելէ ետք՝ զ'այն իր առաջին կարգի շքանշաններով պատուէ , անոր ամեն խորհրդոց հետեւի ու խնաստութեանը վրայ մեծ վստահութիւն ցուցնէ :

Որպէս զի Կերվինուսի ըսածը շիտակ ըլլայ , պէտք է երկու բանին մէկն ըլլայ կամ Աղեքսանդր Կայսրը փոփոխամիտ մարդ մ'եղած ըլլալու է եւ կամ Մէթթէրնիք քան զ'չափ ճարտար Իլեանագէտ մը , եւ պատմագէտք իրօք այս վերջինն այնչափ ճարտար կը կարծեն որ կարող էր միեւնոյն անձին նկատմամբ միեւնոյն կերպով ընթացք մը բռնելու :

Սակայն ինչ ալ ըլլայ եթէ Մէթթէրնիք՝ չ'յաջողեցաւ Ռուսո-Բրուսիական դաշնակցութիւնը քակելու գէթ կրցաւ անոր հակակշիռ մը ձեւացնելու որ թէ եւ իր բարձր ակնկալութեան չ'պատասխանեց այսու ամենայնիւ Սաքսօնիոյ եւ Լեհաստանի խնդիրները այնպէս մը լուծիլ առւաւ որ Եւրոպական հաւասարակշռութիւնը մեծ վնաս մը չ'կրեց :

Սաքսօնիոյ մէկ մասը Բրուսիոյ անցաւ միւսը Սաքսօնիոյ թողաւորին եւ Վարսօվի մեծ Դքսութիւնը երեք տէրութեանց Բրուսիոյ , Աւստրիոյ ու Ռուսիոյ միջ բաժնուեցաւ :

Ստուգիւ Մէթթէրնիք՝ չ'կրցաւ արգիլուլ որ Փօլծնիա չ'բաժնուի , բայց անուրանալի ալ է որ արգիլելու միջոցներ ալ չ'ունէր , հետեւաբար ըրաւ ինչ որ խմաստուն պաշտօնեայ մը պէտք էր ընել , այսինքն գէթ Աւստրիոյ դրացի տէրութեանց փառասիրութիւնը չափաւորեց :

Արքայաժողովն աս կնճառտ խնդիրները լուծելէ յետոյ , ստիպուած էր ուրիշ թիչ պակաս կնճառտ խնդրով մ'զբաղելու այն է Գերմանական խնդիրը :

Աս խնդրոյն մէջ ալ մեծ շահեր իրար կը բաղվիէին : Աւստրիոյ Կայսրը՝ որ Նաբօլէօն Ա. նոյն ստիպմամբ Գերմանիոյ Կայսերական թագէն հրաժարած էր պիտի բաղձար զ'այն նորէն գլուխը դնելու : Բրուսիա՝ որ բոլորովին Գերմանական տարրէ բաղկացեալ տէրութիւն մ'էր , կ'ուզէր եւ կը ճգնէր բոլոր Գերմանիոյ վրայ գերագահութիւն մ'ստանալ :

Մէթթէրնիք՝ թոյլտուութիւն ըրած էր Լեհաստանի մէկ մասին Բրուսիոյ անցնելուն որպէս զի աս տէրութիւնը՝ չ'կարենայ իրբեւ բոլորովին Գերմանացի տէրութիւն արածենալ եւ Գերմանական միութեան գաղափարն առաջ տանիլ , գաղափար՝ զ'որ Աւստրիա չ'էր կրնար սնուցանել զանազան օտար ազգերէ կազմուած տէրութիւն մ'ըլլալուն համար : Դարձեալ Բրուսիոյ Գերմանիոյ վրայ սնուցած գաղափարներէն վախնալուն համար էր որ Մէթթէրնիք՝ աւելի կ'ընտրէր աս վերջին տէրութեան (Բրուսիոյ) Սլավ կամ բոլորովին օտար գաւառներ տալ քան թէ Սաքսօնիան որ Գերմանական երկիր մ'էր :

Աւստրիայէն ու Բրուսիայէն զատ Գերմանիոյ հարաւային կողմը Պաւիէրա կար որ զանազան պահանջումներ կ'ընէր , վասն զի Աւստրիայէն ու Բրուսիայէն զատ՝ Գերմանական ամենէն մեծ տէրութիւնը՝ Պաւիէրա էր : Աս տէրութիւնը Նաբօլէօն Ա. նոյն

կայսրութեան ատեն Գերմանիոյ եւ Աւստրիոյ բոլորովին հակառակ ընթացք մը բռնեք էր : Այս պատճառաւ դաշնակցաց քաղաքականութիւնը՝ Միւնխիքի արքունեաց նպատաւոր չ'էր : Բայց Մէթթէրնիք՝ անքայտօղովոյն մէջ զՊաւիէրա կը պաշտպանէր մինչեւ անգամ 1814 հոկտեմբերին դաշնակցութիւն մը ալ ըրած էր Պաւիէրայի հետ որուն մէջ կը մտնար նաեւ Գաղղիա :

Մէթթէրնիքի այս քաղաքականութեան պատճառը յայտնի է : Բրուսիա՝ Գերմանիոյ հիւսիսային կողմը ազդեցութիւն ստանալ կ'սկսէր , արդ մեծ դիւանապետը կը բաղձար որ Պաւիէրա ալ իր դերքով նոյնչափ ազդեցութիւն ստանայ հարաւային Գերմանիոյ վրայ , այնպէս որ երկու Գերմանացի տէրութիւնք՝ հաւասարազօր մնան եւ Աւստրիա կարենայ անոնց մէկին կամ միւսին օգնելով , եւ միշտ զանոնք իրարմէ բաժնելով , ստանալ Գերմանիոյ վրայ այն իշխանութիւնը որ , ուրիշ կերպով չ'էր կրնար ձեռք բերել :

Մէթթէրնիք՝ կը կարծէր թէ Պաւիէրա՝ այնչափ պէտք ունի Աւստրիոյ օգնութեան որ Յրանքֆորթեղած ատեն ըսած էր թէ «Աւստրիոյ ու Պաւիէրայի դաշնակցութիւնն անանկ փոխադարձ պէտքերու վրայ հիմնուած է որ դարէ մ' աւելի պիտի տեւէ » :

Մինչդեռ իշխան Պաշտօնեան՝ Պաւիէրայի Թաղաւորութիւնն ընդարձակելու կ'աշխատէր եւ աս տէրութեան հետ բարեկամութիւն կ'ընէր , միւս կողմանէ անհոգ չ'էր կենար եւ Պաւիէրայի քաղաքական ընթացքին վրայ այնպէս խիստ հակողութիւն մը կ'ընէր՝ որ իր քաղաքագիտական բարձր հանձարին մեծ ապացոյց մ' էր :

Մէթթէրնիք՝ իր քաղաքագիտական գործակալներուն միջոցաւ ձեռք անցուցեր էր պաշտօնագիր մը որ Պաւիէրայի արտաքին գործոց պաշտօնեան գրած էր առ

Դեսպանն Գաղղիոյ եւ որուն մէջ Պաւիէրայի վարչութիւնը Գաղղիոյ վրայ ջերմ համակրութիւն մը կը ցուցնէր : Ասով յայտնի կերեւար թէ Պաւիէրա՝ մեծ տէրութիւն մը ձեւանալով՝ կ'ուզէր Աւստրիայէն աւելի Գաղղիոյ վրայ յենուլ : Հարգեքձ այնու Մէթթէրնիք՝ Բրուսիոյ ապագայ քաղաքականութեան եւ Գերմանական միութեան զազաւարաց զարգացումն այնչափ ճիշտ հեռատեսած էր՝ որ աշխատեցաւ Պաւիէրայի կարեւոր գաւառներ տալ : Գաշնադրութիւն մ' ալ ըրած էր աս տէրութեան հետ որուն տնօրէնութեանց ու տրամադրութեանց համեմատ Մէթթէրնիք՝ Յրանքֆորթ , Հանաւ քաղաքները ինչպէս նաեւ Մայանս՝ բերդը որ Գերմանիոյ բանալին , է աս տէրութեան պիտի յանձնէր : Բայց տէրութիւնք՝ աս դաշնադրութիւնը չ'ընդունեցան :

Աւստրիա՝ Պաւիէրայի Գաղղիոյ հետ ունեցած բարեկամութիւնը տեսական չ'էր կարծէր , մանաւանդ կը յուսար որ Գաղղիոյ դրացի Գերմանական երկրի մը մէջ բողոքովին Գերմանական զգացումներ կը զարթնուն : Բայց Բրուսիա այսպէս չ'էր կարծէր կամ չ'էր ուզեր կարծել : Պաւիէրայի վարչութեան Գաղղիական զգացումներուն վրայ միւս տէրութեանց մանաւանդ Անգղիոյ եւ Ռուսիոյ ուշն հրաւիրելով՝ Պէրլինի դաշինքը կը ջանար նոյն երկու տէրութիւններն ընդդէմ Պաւիէրայի գրգռել :

Բրուսիոյ ջանքերն յաջողութեամբ պսակուեցան , վասն զի Մէթթէրնիք՝ որչափ ալ նրբամիտ ըլլար , հարկ էր որ Պաւիէրայի մէջ ալ եթէ ոչ ճարտարութեամբ իրեն հաւասար այլ գոնէ իր խորհրդոց թափանցող պաշտօնեայ մ' ըլլար : Սակայն Պաւիէրա Թալէրան մը չունէր :

Ուրեմն դիւրին էր Բրուսիոյ Մայանսի բերդը Գերմանական դաշնակցութեան բերդ մ' ընել եւ

Յրանքֆորթն ազատ քաղաք հրատարակել տալ :
 Մէթթէրնիք՝ իր պահանջման ուժ տալու համար
 հարկ էր սպառնար եւ սպառնալու համար ալ սխտը
 էր պատերազմելու յանդգնիլ : Այն ժամանակ Ա-
 լբտորիա՝ տկարացած էր Նաբոլէոնի հետ ըրած պա-
 տերազմներէն եւ գրեթէ իրեն բարեկամ ու թշնա-
 մի տէրութիւնք քիչ շատ նոյն վիճակն ունէին : Ա-
 պաքէն արքայածողովը՝ համբերապական պատերազ-
 մի մ' առաջին տունելու համար այնպիսի կարգադրու-
 թիւններ ըրաւ որք խիստ մեծ տեսականութիւն ալ
 չ'ունենային բաւական տարիներ խաղաղութիւն կը
 խոստանային : Աս խաղաղասիրական ոգին էր որ ա-
 մեն հակառակ շահէր իրարու հետ հաշտ պահելու
 կը ձգտէր եւ աս դիտաւորութիւնն էր որ քիչ շատ
 զմանն տէրութիւն գոհ ընել կը ջանար : Վերջապէս
 աս դիտաւորութեամբ էր որ արքայածողովը Եւրո-
 պայի ամենէն մեծ խնդիրը , Գերմանական խնդիրը
 լուծեց եւ Գերմանական դաշնակցութեան դադա-
 փարը յղացաւ :

Աս դաշնակցութիւնը կը բաղկանար բոլոր մեծ ու
 պզտիկ Գերմանական տէրութիւններէն : Աս դաշ-
 նակցութեան հիմունքն ասոնք էին :

« Գերմանական քաղաքները՝ Գերմանիոյ վեհազուն
 իշխաններուն հետ այսինքն Աւստրիոյ Կայսրը , Բրու-
 սիոյ , Տանիմարքայի եւ Ստորին—Նազանգաց թա-
 դաւորները մշտնջենաւոր դաշնակցութիւն մը կազ-
 մեն իրենց ներքին եւ արտաքին սպառնալովութեան
 անկախութեան եւ փոխադարձ անդունդարարելու-
 թեան համար : Ամենքն ըստ իրաւանց հաւասար են .
 աւազածողովին՝ որոյ կեդրոնն է ՚ի Յրանքֆորթ առ
 Մայն , սրտուոյ նախագահութիւնը Աւստրիոյ կը վերա-
 բերի . տանուեթ ըսուէ աւազածողովին (տի էթ) ե-
 րեսունութ անդամներու մէջ բաժնուած են եւ այլն » :

Աս կազմութեան մէջ Մէթթէրնիք՝ կրցած էր Ա-
 լբտորիոյ Կայսեր համար՝ գահերիցութիւն մը ձեռք
 բերել : Ասկից աւելի բան մը չ'էր կրնար ընել : Վասն
 զի նախ Աւստրիա՝ իր տէրութեան մէջ Բրուսիոյ
 չափ գերմանացի չուներ , երկրորդ Գերմանական
 միութեան գաղափարները Գերմանիոյ մէջ այնչափ
 տարածուեր էին որ անհնար էր Աւստրիոյ աւելի
 պահանջում մ' ընել :

Մէթթէրնիք՝ Պաւելլոյի հետ կնքած դաշնադ-
 րութեամբ ուզած էր զբաւոր Գերմանիա մը կազ-
 մել . բայց անանկ Գերմանիա մը ուսկից Աւստրիա
 դուրս ելնել չ'ստիպուեր : Սակայն աս խորհուրդը
 ինչպէս տեսանք , չ'էր կրցած յաջողիլ :

Կիրվինուս՝ պատմաբանն աս սարաքային վրայ խո-
 սելով կը պնդէ թէ Ռուսաց Աղէքսանդր Կայսրը
 Մէթթէրնիքէն վախնալ ու զգուշանալ կ'սկսէր :

« Ռուսիա կ'ըսէ նա կ'սկսէր եւս առաւել վախնալ
 Գերմանիոյ արտաքին մեծութենէն եւ անոր ներքին
 զօրութեանց աճմանէն , աս երկուքէն այնչափ աւե-
 լի կը վախնար որչափ որ հասարակաց կարծիքը (Գեր-
 մանիոյ մէջ) իր պահանջումները կը բարձրացնէր
 քանի որ Գերմանական զինուց յաջողութիւնները՝
 զ'անոնք կը պաշտպանէին ու կ'ամրապնդէին » :

Չ'ենք գիտեր որ աստիճան ուղիղ են Կերվինուսի
 աս խորհրդածութիւնները , բայց ինչ որ ճշմարիտ
 է աս է որ Մէթթէրնիք արքայածողովին մէջ ըստ կա-
 րելւոյն ձեռք բերաւ ինչ որ կը փափաքէր , այսինքն
 Եւրոպական տէրութեանց այնպիսի հաւասարակըշ-
 ութութիւն մը կազմել որուն առջին փառասիրութեան
 ձայնը լուէ , հաւասարակըշտութիւն՝ որ Վիէնայի
 արքայածողովոյն գլխաւոր նպատակն եղած էր եւ զ'որ
 Եւրոպայի հինգ մեծ տէրութիւնք՝ 1815 ին Փարի-
 զու երկրորդ դաշնադրութեամբ կը նուիրադործէին :

ՆԿԱՏՄՈՒՆՔ ԱՐԲԱՅԱԺՈՂՈՎԻՆ
ԵՒ ԱԶԳԱՅՆՈՒԹԻՒՆՔ

Վերջին՝ դէպքերուն առթիւ 1815 դաշնադրու-
թիւնները ստէպ կը յեղյեղին : Արդ սա դաշնադրու-
թիւնները որոց հաստատութեան ամենէն աւելի
մասնակից եղած էր Մէթթէրնիք՝ եւ որք մինչեւ Ա-
ւըստրիայի մեծ—Դիւանապետին անկումը գրեթէ
անվթար մնացած էին , զ'Եւրոպան այնպէս մը կը
բաժնէին որ ամեն տէրութիւն կրնար բոլորակ սահ-
մաններ ունենալ :

Դաշնակից տէրութիւնք՝ իրենց եւ այլ տէրու-
թեանց սահմանները կարգաւորելու գործն աւելի
աշխարհագրական նկատումներով գլուխ հանեցին եւ
հետեւաբար ազգայնութեանց ու ցեղերու պահանջ-
մանց ուշադրութիւն չըրին :

Օրինակի համար Լօմպարտիոյ ու Վենետիկոյ գա-
ւառնները որոց բնակիչներն Իտալացի են , փոխանակ
Իտալական տէրութեան մը կամ Սարտենիոյ թողե-
լու , նորէն Աւստրիոյ թողուցին . վասն զի սա վեր-
ջին տէրութեան սահմանները կը բոլորակային :

Դարձեալ Պէլճիգան՝ ուր կը բնակի Ֆրանքներու
սերունդ մը , Հոլանտայի նման Գերմանօփլաման տէ-
րութեան մը հետ խառնելով Ստորին—Նախնադաջ
թագաւորութիւնը կազմեցին :

Աս կարգադրութեանց մէջ ամենէն աւելի նշանա-
ւորն է Փօլօնիոյ բաժանումը : Փօլօնիա՝ տասնուվեց-
երորդ դարու վերջերը եւ ժէր դարու սկիզբները
Ռուսիոյ դէմ Եւրոպայի պատուարն էր եղեր , միան-
գամայն իր աշխարհագրական դիրքով Եւրոպական
տէրութեանց հաւասարակշռութեան համար կարե-
ւորութիւն ստացած էր :

Ռուսիա , Բրուսիա եւ Աւստրիա՝ իբրեւ սահմանա-
կից տէրութիւնք Փօլօնիոյ , սա ընտրական թագաւո-
րութեան ներքին զժտութիւններէն եւ անոր մէջ
պատահած քաղաքային պատերազմէն օգուտ քաղե-
լով՝ զ'այն , Եւրոպայի միւս տէրութեանց բողոքնե-
րուն ու կամացն հակառակ , 1793 եւ 1795 ին իրենց
մէջ բաժնած էին :

Նաբօլէօն Ա. 1807 ին Վարսավիայի մեծ դքսու-
թիւնը հաստատելով՝ Փօլօնիացւոց անկախութեան
նշոյլ մը տուած էր : Այլ այս դքսութիւնը՝ Նաբօ-
լէօնի Իշխանութեան հետ կ'ընար :

Պատմութիւնը՝ կը յանդիմանէ զ'Գաղղիոյ կառավա-
րութիւնը՝ որ Փօլօնիոյ առաջին բաժանման անտար-
բեր հանդիսատես կեցաւ : Ասի սխալ մ'է : Լուի Ժ.Ե.
Գաղղիոյ թագաւորը՝ որուն համար կ'ըսեն թէ Բօմ-
բատուր մարքիզուհւոյն ազդեցութեան տակ , իր քա-
ղաքականութիւնն իր տիրուհւոյն քմածին կամաց կը
համաձայնեցնէր , մասամբ իւրիք ազատ է սա յանդի-
մանութենէն :

Գաղղիոյ ճեմարանին անդամներէն Ալպերտը-
Պրօլի իր Դաղսնի դիւանագիտութիւնն (տիրութեան սըք-
րէթ) Լուի Ժ.Ե ի գրուածին մէջ այս վեհապետը
կ'արդարացնէ եւ անոր քաղաքական յանցանքը կը
թեթեւցնէ :

Ահաւաստիկ մաս մ'իւր խօսքերէն ,
«Մասնաւոր միանգամայն քաղաքական ու բարո-
յական յանցանք մը կայ որ միշտ Լուի Ժ.Ե ի յիշա-
տակին վրայ պիտի մնայ . Լուի Ժ.Ե ի գաղտնի թըղ-
թակցութեան յայտնութիւնը՝ եթէ չ'եմ սխալիր , սա
յանցանքին եթէ ոչ ծանրութիւնը գէթ հանգա-
մանքը կը փոխէ : Արդէն ընթերցողը գիտցած ըլլա-
լու է որ Փօլօնիոյ մաս առ մաս բաժնուելու նողկա-
ւի գործին վրայ կը խօսիմ , այն քաղաքագիտական

յափշտակութեան որ անտարբեր Եւրոպայի աչաց առջին կատարուեցաւ . . . : Այն երկու յանդիմանութիւններէն որ աս տխուր նիւթին վրայ Լուի Ժե. Ի կ'ողզէն , մին՝ կարծեմ բոլորովին պիտի անհետի այն էջերուն մէջ զ'որ ընթերցողը պիտի տեսնայ . . . : Լուի Ժե. Ի համար Փօլճնիոյ թշուառութիւնները անակնունելի չէին : Նա զ'անոնք միշտ նախատեսած եւ իր թէպէտ թուլ ու անօգուտ , այլ յարատեւ զբաղմանց առարկայ ըրած էր » :

Պրօլի՝ կը յաւելլու թէ Փօլճնիա՝ գաղտնի Դիւանագիտութեան գլխաւոր եւ միակ նիւթն էր եղած , եւ թէ Լուի Ժե. Ի կարճատես պաշտօնեաներէն գաղտնի՝ կը ջանար Փօլճնիոյ ինքնօրինութիւնը պահել , աս տէրութեան ակտուր Գաղղիացի իշխան մը նստեցնելով :

Եթէ Լուի Ժե. Ի ջանքերը չ'յաջողեցան , պատճառն իր տէրութեան տկարութիւնն էր : Ինչպէ՞ս Գաղղիա միայնակ պիտի արդիւնէր այն որոշումը զ'որ երեք հզօր տէրութիւնք ուզած էին գործադրել :

Ճիշդ աս նկատումն էր որ կ'արդիւնէր զ'Մէթթէրնիք ազդու պաշտպանութիւն մ'ընելու Փօլճնիոյ դատին եւ աս նկատմամբ օգնելու իշխան Թալէրանին որ Փօլճնիոյ բաժանման գէմ խտուր կը բողբէր :

Միանգամայն Մէթթէրնիք՝ իբրեւ պաշտօնեայ մի կայսեր որոյ հովանոյն ներքեւ կ'ապրին զանազան այլաճեա ազգեր , չ'էր կրնար արքայաժողոյն մէջ ազգայնութեանց խնդրոյն փաստաբանն ըլլալ : Ինքն այնչափ միայն կրցաւ ընել որ Փօլճնիոյ մէկ մասը միայն իբրեւ *quis praefatus* Ռուսիոյ հետ միանայ :

Աւստրիա՝ իր դաշնակցաց նկատմամբ բռնած աս բարեկամական քաղաքականութեամբ Իտալիոյ մէկ մասին վրայ ունեցած իրաւունքը կը պահէր :

Ասկեց զատ Մէթթէրնիք՝ եւ այլք Եւրոպական

տէրութեանց սահմանները կանոնադրելու փախուկ պաշտօնն յանձն առնելով՝ իրաւունք ունէին իբր հեռատես եւ արդար մարդիկ ազգայնութեանց սկզբունքն առ ոչինչ գրելու :

Ազգայնութեանց սկզբունք՝ ըսելով կը հասկնան այն իրաւունքը որ ազգ մ'ունի (ըստ ոմանց) այն վեհապետին իշխանութեան հետեւելու կամ այն ազգին ու տէրութեան հետ միանալու որ իր լեզուն կը խօսի եւ իրեն հետ ցեղակից է :

Արդ աս սկզբան գործադրութիւնը՝ զեղծում մ'է ոչ միայն վեհապետական իրաւանց այլ նաեւ արդարութեան , վասն զի հետեւելով աս սկզբան , ազգ մը կամ տէրութիւն մը կ'ստիպուի թողուլ այն երկիրը որ իր նախնեաց արեամբ ստացած է եւ ասով բոլոր աշխարհ տակն ի վերայ կ'ըլլայ :

Բայց թողունք որ այս խնդրոյն վրայ Պ . Թիէր , այն իմաստուն պատմաբանն ու քաղաքագէտն ինքը խօսի եւ ըսէ թէ որ աստիճան անարդար է ազգայնութեանց սկզբունքը : Իր , յետագայ խօսքերը կը քաղենք 1865 Ապրիլ 15 ին Հոտի խնդրոյն վրայ խօսած մէկ ճառէն :

« Կը տեսնէք վեհապետ մը որ ներեցէք ինձ ըսել գայթակղեցուցիչ կերպով կը կողոպտեն , գայթակղեցուցիչ կըսեմ . վասն զի կամ բառերը միոյն կամ միւսոյն համար տարբեր նշանակութիւն ունին եւ կամ ներելի է գայթակղեցուցիչ կոչել այնպիսի յափշտակութիւն մը որուն հանդիսատես կ'ըլլանք , յափշտակութիւն կամ կապտումն՝ որ միմիայն լեզուի նոյնութեան վրայ հիմնուած է , այն ազգայնութեանց սկզբունքին զ'որ այսօր չ'եմ ուզեր վէճի տակ ձգել , բայց որ , ներեցէք ինձ ըսել , անանկ սկզբունք մ'է զ'որ կանոնաւոր վարչութիւն մը չ'կրնար համեստաբար իրեն փաստ առնել : Չ'աշ-

խարհ՝ կը սոսկացնեն երբ անուը տան այն սկզբունքին որուն հետեւանքը քայքայումն է Եւրոպայի բոլոր տէրութեանց :

« Երբ համարձակի մարդ խոստովանիլ թէ յ'անուն այն վտանգաւոր սկզբան կը գործէ , զ'որ սկզբունք ազգայնութեանց կ'անուանեն , յանուն այն մանկական պատրուակին կը շարժի , զ'որ համանունութիւն կամ նոյնութիւն լեզուի կ'անուանի , ի՞նչ բաներ տեղի չ'են ունենար , յ'անուն լեզուի , ի՞նչ բաներ չ'պիտի պահանջենք յ'անուն լեզուի եւ ուրիշներն ալ ի՞նչեր չ'պիտի ուզեն մեզնէ յ'անուն այս պատրուակին : Արդ գիտէք արդարեւ թէ Գաղղիոյ մէջ ամեն մարդ Գաղղիերէն չ'խօսիր , գիտէք նաեւ թէ արտաքոյ Գաղղիոյ մարդիկ կան որ Գաղղիերէն կը խօսին » :

Աս խօսքերէն ետեւ Պ. Թիէր կը հետեւցնէ թէ ժողովուրդ մը իրաւունք ունի պահանջելու որ զ'ինքն աղէկ կառավարեն այլ իրաւունք չ'ունի իր երկրային վեհապետը փոխելու այսինքն օտար վեհապետի մը անցնելու : Աս եզրակացութիւնն ալ ընեւէն ետքը այսպէս կը շարունակէ ,


« Ազգ մը իր վեհապետը փոխելու իրաւունքն ունի թէ ոչ : Ես կը պնդեմ թէ չ'ունի : Ասիոյ մէջ չ'ենք ուր բռնական գորութիւնը կ'իջիւէ . Եւրոպայի մէջ ենք , այսինքն իրաւանց երկրին մէջ , ուր թէեւ իրաւունքը՝ տարակոյս չ'կայ որ երբեմն կը բռնաբարի , բայց իբրեւ բացառութիւն կը բռնաբարի եւ ուր ամեն մարդ կը բողոքէ կամ կրնայ բողոքել երբ բռնաբարի : Երբ մեր Եւրոպայի մէջ որ եւ իցէ տեղ մը իրաւունքը բռնաբարի , ամեն տեղ ալ այնպէս կրնայ ըլլալ : Իտալիոյ մէջ անցած դէպքերը ամեն զգայուն , արդարութեան զգայուն մարդիկը արտմեցուց , վասն զի Իտալիոյ մէջ իրաւունքը բռնաբարելով գիտէք թէ ի՞նչ ըրիք Տանիմարքայի գոր-

հողութիւնն անհրաժեշտ ըրիք : Իտալիոյ մէջ եղած գործերուն համբերելէ եւ զ'անոնք քաջալերելէ ետքը ուրիշ իրաւունք մը չ'ունէիք որ Գերմանիոյ գործոց առթիւ յիշէիք : Տկարին համար Եւրոպայի պաշտպանութիւնը խնդրելով Տանիմարքայի մէջ ի՞նչ բարոյական իշխանութիւն կրնայինք ունենալ : Վիքթօր—Էմանուէլի ապագայ նմանողներուն կը դիմէիք (1) եւ բնական էր որ Ձեր խօսքերուն չ'անսային :

Կ'ըսեն թէ Տանիմարքայի գործին մէջ խաղաղութիւնն ապահովեցաւ : Ո՛չ , որովհետեւ խաղաղութիւնը վտանգի մէջ էր : ԶՏանիմարքա կորուսիք չնորհիւ ազգայնութեանց սկզբունքին : Եթէ ժամանակն ինձ ներէր , յայտնապէս կապացուցանէի ասիկա , գրութիւնք ի ձեռքին :

« Այն սկզբունքը որ թոյլ տուիք Իտալիոյ մէջ հաստատուելու եւ որ օր մը կրնայ ամենուրեք գործադրիլ , այն սկզբունքը ամենէն վտանգաւոր սկզբունք մ'է : ... Բողոքս Եւրոպայի բոլոր պզտիկ տէրութեանց համար է » :

« Երբ կը պնդեն թէ պզտիկ տէրութիւնք՝ կարելոր չ'են , կ'ըսեմ թէ աս ըսողները աշխարհի պատմութեան վրայ դոյզն ծանօթութիւն մ' ալ չ'ունին եւ մասնաւորապէս Եւրոպայի աշխարհացուցին տեղեակ չ'են : Պզտիկ տէրութիւնք՝ անհրաժեշտ կարեւորութիւն մ' ունին : Երբ անհետանան , միայն մեծ տէրութիւնք՝ կը մնան որք ամեն վայրկեան իրարու հետ պիտի զարնուին : Յարատեւ պատերազմներ պիտի ըլլան . մի միայն մեծ տէրութիւնք պիտի մը-



(1) Եւրոպայի տէրութեանց սահմաններուն կարգադրութեան մէջ Վիէնայի արքայաժողովոյն նկատումները բացատրելու համար Պ. Թիէրի աս պնդելի ձառը մէջ բերելով զիտել կուտանք ընթերցողին թէ Թիէր՝ որչափ ճեռատես էր որ 1865 ին կը նախատեսէր ինչ որ 1870 ին պիտի պատահէր :

նան , որոնց մէկը վերջապէս միւսները պիտի կրնէ եւ պիտի ունենաք տիեզերական միապետութիւնը՝ որն որ պարզապէս ազգաց գերութիւնն է : Ուրեմն պզտիկ տէրութիւնք անհրաժեշտ են եւ ամէն վարչութեանց քաղաքականութիւնը զ'անոնք պահել եղած է , ոչ մի'անձուկ նախանձով , այլ մի իմաստուն նախատեսութեամբ :

«Պզտիկ տէրութիւնք են որք մեծերուն մէջտեղ զետեղեալ նոցա ընդհարումը կ'արգիլեն եւ որք բաց ասկից ազգաց խորհուրդներուն մէջ միշտ իրաւանց համաձայն միջոցներ կը մտցնեն , իրաւանց համաձայն կ'ըսեմ վասն զի տկարութեան համաձայն են , իրաւանց հիմնադիրները զորաւորք չ'էին այլ տրեկարք՝ որք միանալով զ'հիմունկս իրաւանց հաստատեցին (1) » :

Թիէրի աս խօսքերէն ետեւ կարօտութիւն չունինք ուրիշ պատմութիւններէ կամ իրիւստիաներէ ու քաղաքագէտներէ վկայութիւններ բերել գովելու համար այն տրամադրութիւնները որ ի վիէննա ժողովեալ վեհապետք ու դիւանագէտք հրատարակեցին եւ որք բնաւ ազգայնութեանց սկզբան վրայ հիմնեալ չ'էին :

Եթէ վիէննայի արքայաժողովոյն գործը տեւական չեղաւ յանցանքը ոչ այնչափ 1815 ի քաղաքագիտաց նախատեսութեան կը վերաբերի որչափ այն մարդոց որք անոնց յաջորդելով բաւական իմաստութիւն չունեցան այդ դաշանց յարգը ճանչցնելու եւ արգիլելու այն փորձերը որք Եւրոպայի նոր կազմակերպութիւն մը տալու կը ձգտէին :

Չեմ ուզեր ըսել թէ Մէթթէրնիք իրր առաջնորդ կամ նախագահ վիէննայի արքայաժողովոյն , անթերի

գործ մ'ըրած ըլլայ : Ո՞ր մարդկային գործ կրնայ կատարեալ ըլլալ : Սակայն նկատելով այն կիրքերը որ միապետաց եւ նոցա պաշտօնէից սրտին մէջ Գաղղիոյ յեղափոխութեան առթիւ բորբոքած էին , նկատելով իրաց այն ատենուան վիճակը եւ դաշնակիցներու յեղափոխական ազգի մը դէմ վարած յաղթութիւնները , պէտք է մարդ խօստովանի թէ արքայաժողովոյն խորհուրդները չ'էին կրնար ալ աւելի իմաստուն ըլլալ , նորա որոշումները չ'էին կրնար աւելի չափաւոր ըլլալ եւ աւելի յարմար ուրոյն ուրոյն տէրութեանց հանգամանքներուն :

Եթէ պատմաբանք՝ առանց Եւրոպայի սպառաց շահերը մտածելու վայրկեան մը Մէթթէրնիքի հետատես քաղաքականութիւնն ուրացան : այսօր գրէթէ ամենքը միաբան են զայն արդարացնելու :

Մէթթէրնիքի վրայ մէկ ամբաստանութիւն մը միայն կայ զոր եթէ ջրեւ կարելի չէ գէթ թեթեւցնել դիւրին է : Շատ պատմաբաններ եւ կերպիւնուս ի մասնաւորի կը պարսաւեն զՄէթթէրնիք այն երկդիմի քաղաքականութեան համար որուն բողոքովին կը յարէր արքայաժողովոյ նիստերուն ժամանակ : Բայց ուրիշ ի՞նչ ընթացքով Մէթթէրնիք այնչափ դարանները պիտի քակէր : Անի միայն մէկ տեղ մը սխալեցաւ :


Զվիցերիոյ սահմանադրութեան խնդիրը որ ուրիշ խնդրոց նկատմամբ չ'էր կրնար ծանրակշիւ համարուիլ Մէթթէրնիքի աքաղաքականութեան միջոցաւ բողոքովին խառնակեցաւ եւ վայրկեան մը դաշնակից տէրութեանց մէջ պառակտում ձգեց :

Մէթթէրնիք երկու գործակալ զրկած էր Զվիցերիա որոց մին՝ Պէռնա եւ միւսը Յիւրիխ երթալով միշտ յանուն Աւստրիոյ Զուիցերացւոց անանկ խօստումներ կրնէին որք իրարու չ'էին համաձայնէր եւ հետեւաբար մինչդեռ Զուիցերացւոց մէկ մասը կը

(1) Ճառք Թիէրի , էջ 103 , 106 եւ յետագայս :

կարծէր թէ Աւստրիա՝ Զուիցերիոյ 1798 էն յառաջ
 ունեցած սահմանադրութեան կուսակից է, միւս
 մասը կը հաւատար թէ նազանգներու անկախու-
 թեան կամ առանձին սահմանադրութեան դէմ Ա-
 ւըստրիա բան մը չպիտի գործէ: Գործոց այս վի-
 ճակին մէջ Մէթթէրնիք իր Պէռնա զրկած գործա-
 կալին պաշտօնական դիրքն ուրացաւ, վասն զի տե-
 սաւ որ, ուրիշ տէրութիւնք իր երկրորդ գործա-
 կալին հրահանգաց համաձայն զխտաւորութիւններ
 ունէին:

Զուիցերացւոց խոհեմութիւնը՝ միայն լուծեց այս
 խնդիրը եւ վերջապէս տէրութիւնք՝ հետեւեալ որո-
 շումներն ըրին զոր Զուիցերիոյ աւագաժողովն ալ
 ընդունեցաւ: Այսինքն Արիօվիա եւ Վօ նահանգ-
 ներն՝ իրենց անկախութիւնը պիտի պահէին, Պալլի
 եպիսկոպոսութիւնը եւ Պրանտրաթ ու Պրէն Պէրնա-
 յի նահանգին հետ պիտի խառնուէին եւ ձինչ վրայի
 նօէշաթէլի ու Վալէյի նահանգները զոր Գաղղիա՝
 Զուիցերայէն բաժներ էր, նորէն Զուիցերական դաշ-
 նակցութեան վրայ պիտի յաւելնային իբր նոր նա-
 հանգներ:



Է.

ԱՐԳԻԻՆՔ ՈՐՈՇՄԱՆՅ ԱՐՔԱՅԱԺՈՂՈՎՈՅ

ԿԱՄ

1815 ԻՆ ԵՒՐՈՊԱՆ

Արքայաժողովոյ որոշումները լաւ մը հասկնալու
 համար պէտք է տէրութեանց սահմաններուն վրայ
 եղած փոփոխութեանց ցուցակ մը ներկայացնել:
 Զուիցերիոյ Փօլժնիոյ եւ Գերմանական դաշնակցու-
 թեան նկատմամբ եղած տնօրինութիւնները տեսանք:

Գաղղիա՝ 1815 ի դաշնադրութեանց համեմատ իր
 1789 ի սահմանները միայն պահեց: Սախայն Ավին-
 եօն քաղաքը որ պապերէն ստնուած էր նորէն ի-
 րեն տուին: Նոյնպէս պահեց Մօնպէլար քաղաքը որ
 յառաջագոյն Վիւրթէմպերկի կը վերաբերէր եւ
 Միւլհուզ որ Զուիցերայէն զատուած էր:

Մեծն Բրիտանիա՝ 1789 էն ի վեր միեւնոյն սահման-
 ներն ունէր եւ իր դրից համար ոչ միայն ծովերու
 թագուհին էր այլ նաեւ Եւրոպայի իրաւարար: Աս-
 կէց զատ ցամաք երկրին մէջ Հաննովէրի վրայ ունե-
 ցած իրաւունքները կը պահէր:

Սսորին—Նահանգաց տէրութիւնը՝ արքայաժողով-
 վոյ որոշմանց համեմատ իր 1789 ին սահմաններն կը
 պահէր. սա տէրութեան մաս կը կազմէին Սպանիա-
 կան սսորին նահանգները (Պէլճիգա) Լիմպուրլը,
 Լիւքսանպուրլը եւ Հօլանտայի հին հասարակապետու-
 թիւնը: Գերմանիա նմանապէս իր 1789 ին սահմանները
 կը պահէր, այլ իր ներքին կազմակերպութիւնը շատ
 փոխուած էր: Երկու տէրութիւնք Աւստրիա եւ
 Բրուսիա մին հարաւային եւ միւսն հիւսիսային կողմը
 մեծ աղբէցութիւն ստացած էին:

Ասոնցմէ դուրս արքայաժողովը չորս գերմանական
 թագաւորութիւններ ձանչցած էր,

1. Պալիերա՝ որմեկնոսի գաւառներուն մէկ մասն ի-
 րեն կը միացնէր, Վիւրթէմպերկ, Հանովրա որոյ թա-
 գաւորն Անգղիոյ վեհապետն էր եւ Սագսոնիա որ
 իր երկրին եւ բնակչաց երրորդ մասը կորուսեր էր
 (վասնզի սա մասը, ինչպէս վերը տեսանք, Բրուսիոյ
 անցեր էր):

2. Ուր մեծ դիտարխներ, Պաս, Երկու Հեւֆ,
 Սագս-Վեյլնար, Երկու Մեխլենպուրկ, Օլշենպուրկ,
 եւ Լիւքսանպուրկ որոյ մեծ դուքս էր Հօլանտայի
 կամ Ստորին-Նահանգաց թագաւորը:

3. Տաս դիստրիկտներ, նասաւ, Պրոււնսլիֆ, Չորս Սախսնեայֆ, Երեֆ Անհայր եւ Հօլշթեյն ու Լաւենպուրկ որոց երկուքին դուքան էր Տանխմարքայի թագաւորը :

4. Տասներկու իշխանութիւնք, Երկու Շվարցենպերկ, Երկու Հօհենցօլերն, Լիխթենշթայն, Վայտիֆ, Երկու Րայս, Երկու Լիքքե, Հես-Հօնպուրկ եւ Քնիֆսուդհեն :

5. Չորս ազգս ֆալսխներ, Ֆրսլիֆօր, Պրեւս, Հօնպուրկ եւ Լիւպիֆ: Դաշնակցութեան Աւազաժողովոյն (Տիէթ) կեդրոնն էր ի Ֆրանքֆօր :

Աւստրիա : 1789 ին Յոլտէփ Բ. կայսրը՝ Գերմանիոյ մէջ Աւստրիոյ արշիդքսութեան, Սթրիտայի, Քարենթիայի, Ֆրիուլի, Թիրոլի, Աւստրիական Սոււապի, Մօրաւիոյ Պօճէմիոյ եւ բարձր Սիլէզիայի մէկ մասին կը տիրէր, Գերմանիայէն դուրս ունէր Հունգարիան որ յառաջագոյն զատ թագաւորութիւններ եւ Աւստրիոյ լուծին տակ դարձեալ իր մասնաւոր օրէնքները կը պահէր եւ Կալիցիան որ Լեհաստանի բաժանման մէջ իրեն բաժին ինկած էր եւ Միլանը : Ասկէց զատ Աւստրիա՝ Հիւսիսային ծովուն եզերաց վրայ Սպանիական Ասորիւն նահանգներուն կիշխէր : 1815 ի դաշնադրութիւնները իր բոլոր առջի երկիրները նորէն իրեն տուին բաց ի սա վերջին նահանգներէն : Միանգամայն զԱւստրիա ծովային տէրութիւն մ'ընելու համար Վենետիկոյ գաւառը եւ Բօ գետէն մինչեւ Քաթթարոյի խորը գտնուած երկիրները սա դաշնադրութեանց զօրութեամբ իրեն կը մնային :

Բրուսիա՝ 1789 ի Պրանսուպուրկի կայսրնարութեանէն, Դքսական Բրուսիայէն, Բօմէրանիայէն, Մակտեպուրկէն եւ Սաքսոնիոյ մէջ ունեցած մէկ քանի երկիրներէն կը բաղկանար, իր միւս գաւառներն էին Վէսթֆալիոյ մասը, Մինտէն, Մարք, Քլէվ եւն,

Թագաւորական Բրուսիան եւ Նէօշաթէլի իշխանութիւնը (որ Զուիցերական գաւառ մ'է) : Բաց ի Բօմէրանիոյ այն մասէն որ Շուէտէն առած էր, Բրուսիա՝ Բօլօնիոյ բաժանման մէջ ալ Փօլէնի մեծ-դըքսութիւնն ստացած էր : Նաբօլէօնի հետ ըրած պատերազմներուն մէջ սա գաւառներէն շատերը կորուսեր էր, այլ 1815 ի դաշնադրութիւնները ոչ միայն նորէն զանոնք Բրուսիոյ տուին, այլ նաեւ սա տէրութեան հետ խառնեցին Վէսթֆալիան ու Ստորին Հուենոսի մեծ-դքսութիւնը ինչպէս նաեւ Սաքսօնիոյ մէկ մասը : Բայց սա վերջին գաւառները բուն Բրուսիոյ գաւառներէն հեռի էին եւ օտար տէրութեանց երկիրն էր զանոնք Բրուսիական միապետութեան միւս մասէն կը բաժնէին : Մէթթէրնիք՝ որ փոյթ չէր ըրած Հօլանտան թողելու, վասն զի Աւստրիոյ միապետութեանէն հեռու էր, անշուշտ մեծ մասնակցութիւն ունեցած էր Բրուսիոյ սահմաններուն սա տեսակ յոռի կարգադրութեան մէջ :

Պէտք է զիտել որ բաց ի Բրուսիայէն, որ Աւրստրիոյ ոսոխն էր, ուրիշ ամէն տէրութեանց սահմանները ըստ կարելոյն լաւ կարգադրուած էին :

Տակիստրիսա. Աս տէրութեան ձեւքէն Նորվէկեան առնելով Շուէտի տուին եւ իբր հասուցում Լաւէնպուրկի դքսութիւնը տուին իրեն : զՏանխմարքա այսպէս կ'անդամահատէին վասն զի սա տէրութիւնը Նաբօլէօնի հաւատարիմ դաշնակից եղած էր :

Շուէսի տէրութիւնը՝ յեղափոխութեան եւ Նաբօլէօնի կայսրութեան ատեն պատահած պատերազմներուն մէջ Բօմէրանիա, Ռիւկէն, Վիլմար գաւառները կորուսեր էր որ Բրուսիոյ անցան ինչպէս նաեւ Պօթնիան ու Ֆինլանտան զոր Ռուսիա գրաւած էր : Աս կորուսած գաւառներուն փոխարէն առած էր զՆորվէկիա եւ այնուհետեւ Շուէտի ու Նորվէկիոյ

Թագաւորութիւն կը կոչուէր : Ռուսիա 1789ին (Կատարինէ Բ. ին իշխանութեան ատեն) Եւրոպայէն Ասիա կը տարածուէր : Իր Եւրոպական Սահմաններն էին Կովկասը , Սեւ ծովը , Տնիէքեր եւ Պերէզինա եւայլն գետերը : Հարաւէն մինչեւ Բրուժ կը հասնէր : 1815ին Ռուսիոյ սահմանները մինչեւ Վիսթուլա գետը կը հասնէին : Փօլճիա՝ Կայսրութեան մէկ մասը կը կազմէր եւ Շուէտէն առած գաւառներուն համար իր հիւսիսային արեւմտեան կողման սահմանները Թանա եւ Թօռնէա գետերն էին :

Չռիցցերս 1789 ին տասներեք նահանգներէ բաղկացեալ էր , իսկ 1815 ին 22 նահանգի կը բաժնուի թէ եւ իր սահմանները նոյնն էին : Միայն ձիւնէվրայի նահանգն աւելցած էր : Իսկ Նէօչաթէի նահանգին գալով՝ աս նահանգն իշխանութիւն մը ձեւացած էր որ արքայաժողովոյն մէկ անտեղի որոշմամբ համեմատ միանգամայն Բրուսիոյ կը վերաբերէր :

Իսպիա . — Նաբօլէոնի Քեռայրը Միւրա՝ որ Նաբօլի թագաւոր էր եւ արքայաժողովէն իբր այսպիսի ճանչցուած , Նաբօլէոն Կայսեր հարիւր օրուան Կայսրութեան ատեն գաշնակցած ղէմ ելլելով դաշին ինկած էր , նորէն ղ'այն ստանալ փորձելով Բիճձօ քաղքին մէջ ձերբակալ եղած եւ հրացանի բռնուած էր : Աս ղէպքէն յետոյ Սիկիլիա կղզին Նաբօլի միանալով Երկուց Սիկիլիաց թագաւորութիւնը կազմուած էր : Միւրայի կը յաջորդէր Սպանիոյ Պարպօններուն կրտսեր ճիւղը : Պապը՝ նորէն իր երկիրները կ'առնուր : Աէն Մարդէնի Հանրապետութիւնը , Մօտենայի Դքսութիւնը , Մօնսթրօյի իշխանութիւնը , նորէն կը հաստատուէին : Թուքանայի Դքսութեան վըրայ քանի մը գաւառներ կը յաւելնային : Իսկ Բարմա , Փիաչէնցա եւ Կուասթալլա նորէն Մարի—Լուիզ Կայսրուհւոյն կը արուէին : Բարմայի հին Պուրպօն-

ներն ալ Լուքայի Դքսութեան տէր կ'ըլլային : Սարտենիայի թագաւորը՝ ձենովան կը դրաւէր . եւ Աւըստրիոյ Կայսրը՝ Վենետիկն ու Լօմպարտիան իր գաւառներուն կը միացնէր :

Ձենովա ու Վենետիկ միջին դարու երկու մեծ ծովային Հանրապետութիւնք այս կերպով կ'անհետանային :

Սպանիա : Իր 1789 ին սահմաններուն վրայ նոր գաւառ կամ քաղաք յաւելցուցած չէր բացի Օլիվէնձո քաղաքէն զոր Փօրթուկալէն առած էր :

Իօրթուկալ : — Մի միայն վերոյիշեալ քաղաքը (Օլլէնձա) կորուսեր էր : Իսկ Օմանեան տէրութիւնը զ'Եւրոպա վրդովող տաքնապին ատեն իմաստուն քաղաքականութիւն մը բռնելով ըստ կարելոյն ազատ մնացեր էր համերոպական պատերազմէն չարիքներէն :


Այս վիճակն ունէր 1815 ին Եւրոպան : Պէտք է մարդ՝ ձեռքը աշխարհի աս մասին աշխարհացոյցն առնէ զիտեղու համար թէ կէս—դարու մէջ որչափ փոխուեցան տէրութեանց սահմանները եւ թէ ինչ էր պով 1815 ի դաշնադրութիւնները , էլ լոյսի Ռեւոտի վրայ , Պէճիգայի Գերմանիոյ եւ Իտալիոյ մէջ իսպառ եղձան :

Այն փոփոխութիւնները՝ զոր Եւրոպայի քաղաքական քարդին վրայ կը նշմարուին յ'անուն ազգայնութեանց սկզբան ինչպէս նաեւ յ'անուն անմիջատութեան սկզբան կատարուեցան : Շատ պզտիկ տէրութիւններ անհետացան : Իտալիոյ եւ Գերմանիոյ միութիւնքն իրականացան :

Աս համեմատութիւնը՝ բաւական է ղ'մարդ հասու ընելու արքայաժողովոյն որոշմանց կարեւորութեան եւ կը՝ ստիպէ մեզ զարմանալ Մէթթէրնիքի տաղանդին վրայ :

Եթէ մայր մ' իր որդւոց մէջ կ'ապրի եւ գրագէտ մ' իր գրուածոց , այլանդակ գաղափար մը չ'է ըսել թէ քաղաքագէտ մ' ալ այն ազգին կամ ազգաց մէջ կ'ապրի որոց ապագային համար այնչափ աշխատած է եւ զ'որ մօտալուտ վտանգէ մը զդուշացուցած է :

Աւելի պարզ խօսելու համար Մէթ թէրնիքի անունն անմահ է եւ ամէն օր պիտի վերակենդանանայ : Երբ դաշնադրութիւն (՝) մ' եղծանի Մէթ թէրնիքի անունը ցաւօք պիտի կրկնեն երբ յեղախիսութեանց միջոցաւ իրաւունքը բռնաբարի , դարձեալ իր անունը պիտի յիշեն , վերջապէս երբ կեղրոնական Եւրոպան նորանոր փոփոխութիւններ կրէ դարձեալ Մէթ թէրնիքի վրայ պատուաւոր առարկութիւններ պիտի ըլլան :



Ը .

ՄԵԹԹԵՐՆԻՔԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԴԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆ

Աս կրօնական ու քաղաքական դաշնակցութիւնը կը կազմէին Ռուսիոյ Բրուսիոյ եւ Աւստրիոյ տէրութիւնները որոնք դաշնադրին մէջ հետեւեալ յայտարարութիւնը կրնէին :

Ներկայ դաշնագրոյն միակ առարկան ցուցնել է տիեզերաց , թէ դաշնադիր տէրութեանց անյողդողէ որոշումն է թէ իրենց ուրոյն ուրոյն տէրութեանց վարչութեան մէջ եւ թէ ուրիշ որեւէ տէրութեան հետ ունեցած յարաբերութեանց մէջ իրենց միակ կանոն ունենալ այն սուրբ կրօնին պատուէրները , արդարութեան գթութեան եւ խաղաղութեան պատուէրները որք ոչ միայն անհատական կենաց մէջ գոր-

(՝) Այսինքն 1815 էն մնացած դաշնադրութիւն մը :

ծաղրելի են , այլ ընդհակառակն պէտք է վեհապետաց որոշումներուն վրայ ազդեցութիւն ունենան , իբր միմիայն միջոցք՝ զմարդկային օրէնս հաստատելու եւ դարման տանելու նոցա թերութեանց :

Աս դաշնակցութիւնը՝ որ քաղաքագիտական զըրուածոց մէջ կրնայ եղական համարուիլ նախ իր միութիւնական ոճոյն համար , երկրորդ վասն զի եղջերուաքաղ մ' իրեն նպատակ ունէր , զանազան պատմաբաններու քննադատութեանց նիւթ եղած է :

Ամենքն առ հասարակ կ'ըսեն թէ դաշնակցութեան նախագաղափարը՝ Ռուսաց Աղեքսանդր կայսեր կը վերաբերի , այլ անոնցմէ եւ ոչ մէկը՝ միեւնոյն կարծիքն ունին այն պատճառներուն վրայ որք զըրդեցին զԱղեքսանդր աս տարօրինակ դաշնագիրն յղանալու :

Լամարթին՝ որ իբր պարզ քերթող քաղաքականութեան մանուածոյ խաղբրուն չ'է կրցած թափանցել , եւ որ անտեղեակ է այդ լարիւրինդոսին պատի պատ ճամբաներուն , կը կարծէ թէ Սուրբ դաշնակցութիւնը սիրուհւոյ մը ներքնասենեակին մէջ յառաջ եկած է եւ ոչ թէ դիւանի մը կամ դահլըճի մը մէջ : Ահաւասիկ իր խօսքերը ,

«Խարօրութիւնը՝ փոխանակ Աղեքսանդրի հոգին ապականելու , զայն զտեր եւ աստուածային ըրեր էր : Կ'ուզէր որ իր աս զօրութիւնը՝ ժողովրդային քահանայութեան մը վերածէ . եւ տիեզերական բարեպաշտութեան ու ողջմտութեան չ'է թէ երազը՝ այլ տիպարը յղացաւ :

«Այս էր Սուրբ-դաշնակցութեան գաղափարը , գաղափար՝ որոյ ոգին այնչափ զրպարտեցին , ներկայացընելով զայն իբրեւ փառասէր կեղծաւորութիւն մը եւ մարդկային ազգը ճնշելու համար փոխադարձ երաշխաւորութեան դաշնադրութիւն մը : Պատմու-

Թիւնը՝ պէտք է անոր ճշմարտ հանգամանքը ցուցնէ : Սուրբ դաշնակցութիւնը՝ Աղեքսանդրի ներշնչած էր վրպական ու միսթիքական կնիկ մը , Տիւին Գրուտնէք» (1)

Համարթինի կարծիքն այնչափ թիւր ու սխալ է որ դժուարին է երեւակայել թէ վառվռուն երեւակայութեան մը յղացած դաշնագիրն առանց մտածութեան ընդունուած ըլլայ Բրուսիայէն Աւստրիայէն եւ ուրիշ տէրութիւններէն : Ստուգիւ անհատական դէպքեր եւ կանայք քաղաքականութեան վրայ ազդեցութիւն ունեցած են եւ Հին պատմութեանէն օրինակ մը տալու համար յիշեցնենք կըլէ՛օպաթրան Եգիպտոսի Ափրիկոյ Կիպրոսի եւ Սելեւկոյ Թագաւորին որուն համար Անտոնիոս տէրութիւն մը կորոյս եւ որուն պատճառաւ Հռոմէական տէրութիւնը վրդովեցաւ , բայց որչափ անտեղի է կարծել թէ Աղեքսանդրի զգացումները՝ իր դահլըճին ինչպէս նաեւ իր դրացի տէրութեանց դահլըճներուն քաղաքական դիտմանց համաձայն եղած ըլլան :

Իսկ այն պատմաբանները՝ որք Սուրբ-դաշնակցութեան ներքեւ ծածկուած կը գտնեն յեղախոսական ոգւոյն դէմ լարուած դարան մը եւ Եւրոպայի միահեծան իշխանութիւնը հաստատելու միջոց մը , աւելի ճշմարտութեան կը մօտենան :

Սակայն ըստ մեզ Կերվինուսի աս նկատմամբ տրւած մեկնութիւնը ամենէն աւելի ճիշդ է :

Ըստ կարծեաց այս պատմաբանին Աղեքսանդր կայսրը ի սկզբանէ գումարման արքայաժողովոյն , Արեւելքի վրայ երազական եւ փառասէր գաղափարներ կը սնուցանէր : Իր աս գաղափարները Սուրբ-դաշ-

նակցութեան տակ կուզէր պահել , դաշնակցութիւն՝ որոյ ձեւն անգամ կը ցուցնէր թէ ԺԹրդ դարու մէջ կրկնուի մ'է այն միջին դարու խաչակրութիւնը ներշնչող քաղաքականութեան եւ դաշնագրոց որք բարձր զգացումներու տակ բոլորովին աշխարհիկ շահեր կը պարունակէին :

Մէթթէրնիք՝ որ Ռուսիոյ Կալիցիա գաւառին վերայ ունեցած դիտաւորութիւններէն ինչպէս նաեւ Աղեքսանդր կայսեր փառասէր քաղաքականութենէն կը վսիմնար , անդրադարձած էր Սուրբ-դաշնակցութեան բուն ոգւոյն ու նպատակին եւ գիտէր թէ Սուրբ դաշնակցութիւնը նոր օրինակ խաչակրութիւն մ'է ընդդէմ այն վեհանձն եւ ազատամիտ ազգին , (1) որ նոյն իսկ միջին դարու մէջ զազատութիւն խղճի յարգած էր : Այլ հանդերձ այնու Աւստրիոյ մեծ դիւանապետը՝ ստիպուած էր Սուրբ դաշնակցութեան մէջ մտնելու վառն զի անգամ մը Ռուսիա եւ Բրուսիա աս դաշնակցութեամբ միանալէ յետոյ , դժար էր Աւստրիոյ , կզվապեալ գիրք մ'ունենալ , առանց իր բարոյական շահերն վտանգի դնելու :

Աւստրիա Սուրբ-դաշնակցութեան մէջ կը մտնէր ոչ թէ զայն զօրացնելու , այլ տկարացնելու համար կամ լաւ եւս անոր անանկ ուղղութիւն մը տալու համար որ փոխանակ փառասիրութեան ձեռք գործիք մ'ըլլալու , եւրոպական հաւասարակշռութեան երաշխիք մ'ըլլայ :

Այն դէնքը՝ որ Աւստրիոյ դէմ պիտի գործածուէր Մէթթէրնիք զայն հնարողներուն դէմ կը դարձնէր :

Այսպէս Մէթթէրնիք Վիէնայի Արքայաժողովին յաջորդող Թրորբաւի Լայպպախի եւ Վէրոնայի արքայաժողովներուն մէջ կը ջանար զՍուրբ-դաշնակցու-

(1) Համարթին : Պատմութիւն Ռուսիոյ . Հատոր Բ . Գիրք իննեորդ , էջ 264—263 :

(1) Հարկ չէ ըսել թէ մեր խօսքն Օսմանեան ազգին վրայ է :

Թիւնը բողբոջին յեղափոխութեանց դէմ նիզակակցութեան մը վերածել :

Երբ 1822 ին Յոյնք՝ ապստամբեցան , եւ Լայպպախի ժողովը պատգամաւորներ զրկեցին տէրութիւններուն եւ առանձինն Աղեքսանդր կայսեր միջնորդութիւնն ուզելու , իշխան Մէթթէրնիք նախ նեսիրօտ կոմսը համազեց եւ ցուցուց Աղեքսանդր կայսեր թէ Սուրբ-դաշնակցութեան ոգւոյն հակառակ էր պաշտպանութիւն ընել Յունաց որք ապստամբելով յեղափոխական գաղափարներ տարածելու ելած էին :


Մեծ—Դիւանապետն իր այս ճարտար քաղաքականութեամբ Օսմանեան Տէրութեան ամբողջութիւնը յարգել տալու կաշխատէր եւ այնչափ ուղիղ ու հեռատես խորհրդածութիւններ կ'ընէր որ Տաճկաստանի ամբողջութեան կենսական խնդիրը՝ Եւրոպայի բարօրութեան եւ քաղաքակրթութեան ու յառաջդիմութեան իբր գրաւական կը համարէր :

(¹) Ուիլեմ—Քինկէյք, անգամ անգղիական խորհրդարանին , պերճախօս ատենաբան եւ նշանաւոր պատմաբան , իր Գրաւումն Ուիլմո գրքին առաջին հատորին մէջ կ'ըսէ թէ Աւստրիոյ տէրութիւնը ամեն տէրութեանէ աւելի կ'զգար առ Գերմանիա եւ առ Եւրոպա ունեցած պարտքը որ կ'ստիպէր զայն Օսմանեան սահմաններուն վրայ եղած անիրաւ փորձերըն արգիլելու : Յերբ կ'ըսէ նա Ռուսք 1828 ին Տաճ-

(¹) Ա . Ուիլեմ—Քինկէյք . Արշաւանք խրիմու , Գաղղիական ծարգմանութիւնն աւ գործին , Հատ . Ա . Գիրք Բ . էջ 30 . ահաւասիկ վերոյիշեալ պարբերութեան Գաղղիերէնը «Քան Լաքիւրի Ֆիւթ անվանի ան տիղ իւթի ան վէնթ իւթի , լը Բրէնա Մէթթէրնիք Ֆիւ լը սէօլ օմ տ'էթա էօրօրէէն քի թանթաւը ֆօրմէր իւն լիկ բուր լա տէֆանս տիւ Սիւլթանս :

կաստանի վրայ յարձակեցան քաղաքագիտաց մէջ միմիայն իշխան Մէթթէրնիք էր որ ջանաց ի նըպաստ Սուլթանին նիզակակցութիւն մը կազմել :

Անգղիա Սուրբ-դաշնակցութեան վրայ այնչափ կը կասկածէր որ Անգղիոյ խնամակալ իշխանը երկրին սահմանադրութեան յարուցած դժուարութիւնները պատճառ բռնելով , աւ դաշնակցութեան մասնակից չէր եղած եւ ասով իրաւունք կուտար Մէթթէրնիքի զգուշաւոր ընթացքին :



Թ .

Մէթթէրնիք ԸՆԳԴԷՄ ՈՒԻՈՅ ՅԵՂԱՓՈՒՅՈՒԹԵԱՆ

Մարդս՝ կենդանիներէ ուրիշ կերպով չտարբերիլ եթէ ոչ իր բարձր իմացականութեամբ եւ մանաւանդ իր կրօնական զգացումներով : Սակայն որչափ մարդ չզոհեցին յանուն կրօնին եւ յանուն գթութեան Աստուծոյն : Վկայ մեր խօսքին Սպանիոյ հաւատաքննութեան խարոյկները , Գաղղիոյ մէջ Մէն-Պարթէլըմիի կոտորածը ուր բողբոջականք հարիւրներով սպանուեցան , Հնդկաստանի մարդազոհները եւ վերջապէս կրօնամոլութեան շարիքները որ ամեն երկրի մէջ հազարաւոր ընտանիքներ յանուն զանազան կրօնից ի սուգ համակած են :

Ինչպէս ամեն բարձր զգացում , թէեւ յերկնուստ իջեալ , ի ձեռս տգէտ կամ կրքոտ մարդկան կայլայլի , ազատութիւնն ալ աղաւաղելով իր միլեոանդներն ու զոհերն ունեցաւ : Ռօպէսըրթէն Գաղղիոյ մէջ , ազատութիւն աղաղակելով հազարաւոր մարդիկ մահուան ճիրաններուն դատապարտեց եւ ֆրօմուէլ յԱնգղիա , Կարոլոս Ա . նոյն մահուան հետ հարիւ-

րաւոր անմեղներու մահուան յանուն այդ մոգական բառին շարժառիթ հանդիսացաւ :

Արդ պէտք է կրօնամոլութիւնն արմատաքի խըլելու համար անկրօնութեան նեցուկ մ'ըլլալ, հարկ է յեղափոխականաց բռնութիւններուն առաջին առնելու համար ազատութեան դէմ գինիլ :

Անշուշտ սխալ տրամաբանութիւն մ'է ասի . բայց երբ մարդ մը մանաւանդ Մէթթէրնիքի նման երկջուտ եւ կասկածոտ մարդ մը մօտէն կը տեսնայ այն աղէտը զոր վերը յիշեցինք եւ որուն վրայ մարդկութիւնը կուլայ, այդպիսի մարդ մը չ'կրնար պաղ արեամբ մտածել եւ ուզելով արգիլել ինչ որ չարիք է խօշորհոտ կըլլայ բարւոյն . Չ'ենք կարծեր որ Մէթթէրնիք թշնամի եղած ըլլայ ազատութեան, այլ թշնամի էր ազատութեան պատրուակաւ գործուած զեղծումներուն . Մէթթէրնիք՝ բարեկամ չ'էր բռնութեան այլ իր տենդային մտածութեան մէջ բարեկարգութիւնը բռնութեան հետ կը շիտթէր :

Մէթթէրնիքի ներքին քաղաքականութիւնը՝ որ այնչափ յարձակմանց առարկայ եղած էր Հապրսպուրիի ցեղին հովանոյն ներքեւ ազգայնութիւններն անհետացնելու հետամուտ չ'էր, այլ գիտնալով որ այդ զանազան ազգերուն ինքնօրինութիւնն ու անկախութիւնը աւելի իրենց շահերուն կը վնասէ, կը ջանար, զանոնք բոլորովին Աւստրոյ իշխանութեան տակ միացնելու որպէս զի մի գուցէ առաջին աշխարհակալին որս ըլլան :

Իսկ իր արտաքին քաղաքականութեան մէջ բռնած ընթացքը ինչպէս ըսինք ամեն տեղ յեղափոխութեան դէմ մաքառիլ էր :

Նաբոլէօն Ա. նոյն պատերազմասէր ոգին՝ ժամանակ չ'էր թողուցած եւրոպական ազգերուն իրենց ներքին կարգադրութեանց վրայ մտածելու . Ընդհակառակն

ստիպուած էին մեծ աշխարհակալին դէմ պատերազմելու իրենց անկախութիւնը պաշտպանելու համար :

Բայց երբ անգամ մը այդ հզօր կայսրը տապալեցաւ, ժողովուրդք սկսան իրենց ուշադրութիւնն իրենց ներքին վիճակին վրայ դարձնել :

Վիէննայի արքայաժողովը զանազան ժողովրդոց եւ ի մասնաւորի գերմանական ժողովրդին զանազան խոստումներ ըրած էր զոր վեհապետք կատարելու փոյթ չէին ըներ : Աս յապաղումն եւս աւելի կը գրգռէր ժողովրդական կրքերը :

Բոլոր Եւրոպայի մէջ միմիայն երկու միապետութիւնք կային որք կրնային սահմանադրական կոչուիլ, Անգղիա ու Գաղղիա : Անգղիոյ սահմանադրութիւնը իր տեսակին մէջ ամենէն աւելի սքանչելի օրինագիրքներ, բայց հանդերձ այնու իր հիմնական տրամադրութիւնքը այնպիսի նկատումներով խմբադրեալ էին որք միմիայն Անգղիական ժողովրդին յարմար էին : Գարձեալ աս երկրին կղզիացեալ դէրքը եւ մանաւանդ Անգղիացւոց ծանր բնաւորութիւնը՝ չ'էր ներեր իրենց քաղաքային ու ընկերային գաղափարները ուրիշ տեղ տարածել : Անկլօ-Սաքսօն ցեղը բաւական սեպած էր հեռաւոր երկիրներու մէջ միմիայն իր կրօնն ու վաճառքները տարածել :

Իսկ Գաղղիա՝ բոլորովին տարբեր էր : Գաղղիերէնի տարածումը գաղղիական գաղափարաց տարածումը կը դիւրացնէր : Գարձեալ այս ազգին եռանդը՝ կը մղէր զայն իր կարծիքներն աշխարհաքարոզ ընելու : Աշխարհ կիմանար ինչ որ Գաղղիոյ մէջ կ'անցնէր եւ ամէն ազգ արձագանք կուտար Գաղղիացւոց ըսածին : Աս ազգին գրագիտական ինչպէս նաեւ ամէն նկատմամբ ունեցած ճաշակը ուրիշ ազգերը կը մոգէր եւ կը հրապուրէր ընդունելու մինչ

չեւ անգամ այն գաղափարները որոնց հեղինակն ուրիշ ազգեր էին եւ զոր Գաղղիացիք զարդարուն բացատրութեան մը վերածելով իրենց կը սեպհականէին:

Իւրին է ուրեմն հասկնալ թէ ինչո՞ւ ժողովուրդք Գաղղիացւոց կը հետեւէին եւ ուշադրութեամբ հանդիսատես կ'ըլլային այն օրինաւոր վէճին որ արձակաստութիւնն ու սահմանադրականութիւնը Գաղղիոյ մէջ կ'ընէին:

Պուրպօնեանց վերահաստատութեան (ընտրասիօն) պատմութիւնը այս վիճարանութեան պատմութիւնն է:

Արդ կրնայ ըսուիլ թէ Գաղղիացւոց ազատական շարժումները՝ Եւրոպայի մէջ ալ յեղափոխական շարժումներու առիթ կ'ըլլային:

Մէթթէրնիք՝ աս կէտը գիտած էր եւ խիստ համազում էր թէ ժողովուրդք՝ Գաղղիացւոց օրինակին կը հետեւին, եւ ասոր ապացոյցն ալ ունէր:

Գերմանացի պատմաբանք՝ կը պնդեն թէ այն ազատական սկզբունքները՝ որ Գաղղիոյ մեծ Յեղափոխութիւնը յղացաւ, այն սկզբունքները՝ Անկո-Սաքսօն ցեղը յառաջ բերած է: 1517 ի կրօնական վերակոտորութիւնը որ Գերմանիոյ մէջ կատարուեցաւ, ըստ այդ պատմաբաններուն, հարիւրաւոր ազատական գաղափարներ կը պարփակէր, որք ժողովրդոց ընկերային եւ քաղաքական կենաց վրայ եթէ ոչ անմիջական, գէթ սակաւ առ սակաւ եւ տեւական ազդեցութիւն մ'ունեցան:

Առանց քննելու Գերմանիոյ իմաստուն եւ բազմահմուտ պատմաբաններուն ըսածին ստուգութիւնը, բաւական է ակնարկ մը նետել Գաղղիական յեղափոխութեան եւ անոր հետեւութեանց վրայ, համազուելու համար թէ Գաղղիացիք՝ որչափ յաջողակ էին գաղափար տարածելու:

Մէթթէրնիք՝ Գաղղիոյ աս բարոյական ազդեցութիւնն այնչափ աղէկ քննած էր որ երբ Լուի Ժ.Լ. Ի խնդրանօք դաշնակցաց զօրքերը Գաղղիայէն ելան Մէթթէրնիք չորից (չորս տէրութեանց) դաշնակցութիւնը կազմեց Գաղղիոյ ազատական շարժմանց վրայ հսկելու համար:

Գարձեալ երբ 1840 ին Եգիպտոսի կուսակալ Մէհէմէտ-Ալի փաշան իր վեհապետին դէմ անկախ դիրք մը կը բռնէր եւ Գաղղիա՝ անանկ քաղաքականութիւն մը բռնած էր որ անոր քաջալերութիւն կուտար, Մէթթէրնիք յուզուած էր: Մէհէմէտ-Ալի փաշային ընթացից մէջ նախ յեղափոխական ոգի մը նշմարեց, եւ երկրորդ Օսմանեան տէրութեան ամբողջութեան դէմ փորձ մը, որուն կերպով մը Գաղղիա ալ մասնակից էր:

Մէթթէրնիք մատնանիշ ընելով՝ ընդհանուր խաղաղութեան սպառնացող այս կրկին վտանգը վ՛Անգղիա իրեն կը յարէր՝ ինչպէս նաեւ զ՛Ռուսիա եւ զ՛Բրուսիա որք միայն յեղափոխութենէն կը վախնային:

Գաղղիա՝ առանց վախելու այս հզօր դաշնակցութենէն, պատերազմի կը պատրաստուէր եւ գաղղիական լրագիրք բոլոր Եւրոպայի դէմ կը յարձակէին:

Այն ատեն Մէթթէրնիք՝ Գաղղիոյ դեսպանին հետ տեսակցութիւն մ'ունենալով «Պատերազմ կ'ուզէ՞ք, ըսաւ անոր, կ'ուզէ՞ք որ ինչպէս 1815 ին, նոյնպէս ալ հիմա Գերմանիա ալ իր կողմէն ստք ելլէ . . . Գաղղիոյ մէջ գոգցես Թարսնիւրը (1) Ձեզ խայթեր է. կամ պիտի սլարէք եւ կամ ամէնուն վրայ պիտի իյնաք:»

(1) Թարսնիւրը Թունաւոր սարդ մ'է որմէ խայթեալ անձը բոլոր մարմնով կը շարժի ու կը յուզուի:

Բայց եզրիպտոսի խնդիրը որ Մէթթէրնիքի դիտաւորութեանց համեմատ կը լուծուէր , Մեծ-Դիւանապետն այնչափ յոգնեցուցած չէր որչափ այն շարժումները որ Եւրոպայի մէջ 1840 էն շատ յառաջ կը պատահէին եւ որոց առաջքն առնելու համար Եւրոպայի անխոնջ ուստիկանը Մէթթէրնիք տեղիս տեղիս արքայից եւ դեսպանաց ժողով գումարել կուտար :

Գերմանիա եւ Իտալիա՝ միութիւն կը խնդրէին , Փօլոնիա անկախութիւն , Սլաւիա՝ ազատական սահմանադրութիւն մը , եւ ամէն տեղ ժողովուրդք գաղտնի կամ դաւադրական ընկերութիւններ կը կազմէին որք՝ կ'ուխտէին ընդդէմ արքայից միաբանութեան մաքստիլ :

1818—1820 ին Մէթթէրնիքի նախագահութեամբ Վիէննա գումարեալ ժողովին մէջ , ինչպէս նաեւ անկէց յառաջ Գարլպատի ժողովոյն մէջ տէրութիւնք՝ ջանացին Գերմանիոյ ազատական շարժումները ճնշել եւ 1815 ի գերմանական սահմանադրութեան մուրհակը (արդ) կատարելագործեցին : Լրագիրք չէին կրնար խօսիլ , գաղտնի ընկերութիւնք կը ցրուէին , եւ ինչպէս կ'ըսէ Պ. Տօպան , ճարտար լրտեսութիւն մը ամբողջ ընկերութեան վրայ կը ծանրանար :

Սակայն յեղափոխութեան ոգին ճնշուած չէր : Իտալիոյ մէջ ապստամբութիւններ ելան զ'որ Աւստրիա՝ իր միջամտութեամբ կը զսպէր : Միւս կողմանէ Սլաւիոյ , Փորթուկալի եւ Նաբօլի յեղափոխութիւնները՝ եւ Յունաց ապստամբութիւնները ստիպեցին զ'վեհապէտս Թորթբաւ գումարուելու ուր Մէթթէրնիք զանոնք բոլորովին Սուրբ-դաշնակցութեան յարեց , Սուրբ-դաշնակցութիւն որ 1818 ին էքսօ Լա—Շարէլի գաղտնի պայմաններուն պօրու-

թեամբ անանկ դաշնադրութեան մը վերածեք էր որ յեղափոխական ոգոյն դեմ պիտի մաքաւեք :

Աս արքայաժողովոյն մէջ Մէթթէրնիք՝ զ'Լորտ Գապրիկ , Անգղիոյ պաշտօնեան իր քաղաքականութեան յարեր էր : Արդէն Անգղիոյ թագաւորը Գէորգ Դ. ազատատեսաց Վեհապետ մ' ըլլալով՝ բոլորովին Մէթթէրնիքի կուսակից էր :

Մէթթէրնիքի ճարտարութեան զարմանալի մէկ ապացոյցն այն իշխանութիւնն է որ աս պաշտօնեան Աղեքսանդրի մտաց վրայ կը վարեր : Հազիւ թէ Ռուսաց Կայսրը Թրօփիաւ հասեր էր Մէթթէրնիքէն իմացաւ թէ Սէն—Փէթէրսպոլիկի մէջ զինուորական վտարանջութիւն մ' է ելեր եւ իր անձնուէր գնդերէն մին՝ չ'է ուզած հնազանդիլ : Անհնազանդութիւնը՝ երկու օր տեւեր էր բայց աս դէպքը բաւական էր զ'Աղեքսանդր խռովելու :

Երեւակայելու է անգամ մը , պաշտօնեայ մը՝ որ ուրիշ տէրութեան մը Մայրաքաղքին մէջ անցած ծանր դէպք մը՝ շնորհիւ իր աջալուրջ գործակալներուն , այդ տէրութեան վեհապետէն յառաջ կ'իմանայ եւ ինքն իսկ առաջին անգամ անոր կը հաղորդէ :

Մէթթէրնիք՝ աս դէպքէն այնչափ մեծ օգուտ քաղեց որ այդ Թուսականէն (1820) սկսեալ Ռուսաց Կայսեր մտաց վրայ մեծ ազդեցութեան ստացաւ : Աս ազդեցութեան շնորհիւ Մէթթէրնիք՝ համոզեց զ'Ռուսիա , Աւստրիա եւ Բրուսիա միաբանելու եւ թէ քարեխօսութեան , թէ զօրութեան միջոցաւ սակն մը դնելու այն նոր աղեհներուն որք Եւրոպայի կ'ապստանային :

Արքայաժողովը՝ Թրօփիաւէն Լայպախ փոխադրուեցաւ Իտալիոյ աւելի մօտ ըլլալու համար , Իտալիոյ որ յեղափոխութեան Թատր եղած էր : Հոս տէրութիւնք՝ որոշեցին որ Աւստրիա՝ Իտալական գոր-

ծոց միջամտութիւն ընէ եւ 80,000 Աւստրիացիք թերակղզին կը մտնէին Նաբոլիի ֆէրտինան թագաւորին երերուն իշխանութիւնը վերահաստատելու :

1822 ի Վեհապետք Մէթթէրնիքի ներշնչութեամբ նորէն Վերոնա գումարուեցան Սպանիոյ եւ Հարաւային Եւրոպայի յեղափոխութեանց վրայ խորհելու համար : Մէթթէրնիքի իշխանութիւնն այնչափ մեծացած էր որ այն խնդիրները որ այս արքայաժողովոյն խորհրդածութեանց նիւթ պիտի ըլլային նախ եւ յառաջ Վիէննայի մէջ Մէթթէրնիք իշխանին աչաց առջին պատրաստուեցան : Պ. Տօպան՝ իր պատմութեան մէջ արքայից աս ժողովոյն վրայ այսպէս կը խօսի , « Թագաւորք՝ Իշխանք եւ ամենէն երեւելի քաղաքադէտք, Թագուհիք , Իշխանուհիք աս քաղաքն (Վերոնա) եկան (հոկտ . 1822) եւ գլուարձութեանց ու աղմկալից զբօսանաց մէջ , լիագոր պաշտօնեայք՝ դանդաղ կերպով Եւրոպայի գործոց վրայ զբաղեցան . Սեւերու տուրեւառին , ծովահինութեան , Ռուսիոյ եւ Տաճկաստանի մէջ եղած վէճերուն եւ թշուառ իտալիոյ կազմակերպութեան խիստ քիչ ուշադրութիւն ըրին . . . բայց Սպանիոյ խնդիրը որոշեցին » :

Արքայաժողովոյն մէջ Գաղիոյ Ներկայացուցիչ Դուքս Մօնմօրանսիի հրահանգները Սպանիոյ նկատմամբ խիստ շախաւոր էին : Բայց Մօնմօրանսի Դուքսը ջերմ թագաւորական մ՝ ըլլալով իր գեապանական պաշտօնին մէջ իր կարծեաց համեմատ վարուեցաւ եւ յեղափոխականաց դէմ Սպանիոյ թագաւորին իշխանութիւնը վերահաստատելու համար, տէրութեանց միջնորդութիւնը խնդրեց : Երեք մեծ տէրութիւնք՝ ծանուցադրեր ուղղեցին Մատրիտի վարչութեան խնդրելով որ 1812 ի Սահմանադրութիւնը ջնջէ :

Սպանիոյ էվարիսթ Սան—Միկուէլ պաշտօնեայն՝ աս պաշտօնադրին գոռու պատասխան մը տուաւ ,

բայց Գաղիա՝ դեռ կը վարաներ այն միջամտութիւնն ընելու զոր Դուքս Մօնմօրանսի կերպով մը յանձն առած էր : Փարիզու Գաշլըճին վարանումը տեսնելով , Մօնմօրանսի պաշտօնէութենէ հրաժարեցաւ , եւ իր յաջորդը Շաթօպրիան Գաղիացուց զինուորական փառքն բարձրացնելու դիտոււորութեամբ պատերազմ որոշեց ընդդէմ Սպանիոյ ռամկապետականաց : Աւստրիա եւ Բրուսիա՝ անտարբեր էին Պիւրէնեան թերակղզւոյն մէջ անցած դէպքերուն : Իսկ Ռուսիա՝ Եւրոպայի մէջ իր ազդեցութիւնը մեծցնելու նպատակաւ կ'ուզէր միջնորդութիւն ընել եւ ինքն ալ Սպանիոյ արչաւանքին մէջ զինու զօրութեամբ օգնել :


Իշխան Մէթթէրնիք ջանաց աս միջամտութեան առաջն առնելու : Այն միջոցը զոր ընտրեց զՌուսիա հեռացնելու Պիւրէնեան թերակղզւոյն մէջ անցած դէպքերուն միջամուխ ըլլալէ , այն միջոցը՝ այնչափ պարզ էր որչափ ազգու :

Վերոնայի արքայաժողովոյն մէջ Պ. տը Շաթօպրիան քերթող-պաշտօնեայն զՊաղիա կը ներկայացունէր , Մէթթէրնիք՝ խնդրեց իրմէ որ համուզէ զՍ. զեքսանդր Ա. խաղաղութիւնը չաւերելու , եւ չ'ընելու այն զինուորական օգնութիւնը զոր կ'առաջադրեր : Մէթթէրնիք ցուցուց նաեւ Շաթօպրիանի թէ Սպանիոյ արչաւանաց մէջ Ռուսիոյ առ Գաղիա տուած նպատար՝ պատիւ չ'էր բերեր աս վերջին տէրութեան որ պարտաւոր էր իր զինուց փառքը իւրովի բարձրացնել :

Մէթթէրնիքի աս առաջարկութիւնը՝ օգտակար էր ոչ միայն Գաղիոյ այլ միանգամայն Եւրոպայի ու Աւստրիոյ որոց շահերը կը պատուիրէին աս մեծ տէրութեան ազդեցութիւնը նուազցնել ,

Քրիստոնէութեան ողոյն հեղինակը՝ խոստացաւ

ընել ինչ որ Մէթթէրնիք իրմէ խնդրած էր եւ լսածն ալ անոր հաղորդել : Արդարեւ Ռուսաց Կայսեր հետ ունեցած տեսակցութեան մէջ քաղաքավարութեամբ մերժեց Ռուսիոյ օգնութիւնը , առանց որոյ Գաղղիա՝ յաղթեց Սպանիոյ ռամկավարաց եւ անգամ մ'ալ յեղափոխութիւնը ընկճեցաւ : Վերջապէս Մէթթէրնիք մինչեւ 1848 Սուրբ-Գաշնակցութեան հակայեղափոխական սկզբանց հաւատարիմ մնալով Աւստրիոյ ու բոլոր Եւրոպայի մէջ բարեկարգ վիճակ մը պահել կուտար :



Ժ.

ԱՆԿՈՒՄՆ ՄԵԹԹԵՐՆԻՔԻ

1815 էն մինչեւ 1848 , եւ Վիէնայի Արքայաժողովէն մինչեւ Լուի-Ֆիլիպի անկումն ու Գաղղիոյ երկրորդ հանրապետութիւնը Եւրոպայի պատմութիւնը՝ արձակապետութեան ու ազատականութեան յարատեւ կռուէն եւ յառաջդիմականաց ու պահպանողականաց վէճերէն կը բաղկանայ :

Ազատութիւնը՝ որչափ սաստկութեամբ ետ մղուէր՝ նոյն սաստկութեամբ արձակապետականութեան կը բաղկանէր : Երկուքին մէջ հաշտութիւնն անկարելի էր եւ եթէ առաջինը Վերջնական յաղթութիւնը չէր ստանար պատճառն այն էր որ դեռ Գաղղիոյ մէջ յաղթանակ մը չէր կանգնած ուրիշց բոլոր Եւրոպայիտի գղբորդէր : Գաղղիա՝ ինչպէս նախընթաց դլսոյն մէջ ըսինք ուրիշ ազգաց օրինակ կուտար եւ եթէ ազատականութիւնը հոն տիրէր շուտով կ'ընդհանրանար :

Մէթթէրնիք՝ կրցած էր մինչեւ 1848 այս երկրին վրայ հսկել որ ինչպէս դարուս սկիզբները նոյնպէս

վերջը յեղափոխութեան կեդրոնն ըլլալու հանդերձեալէր : Մէթթէրնիք՝ առած մը կամ սկզբունք մ'ունէր այն է « Հանդարտ կենալ ու չ'շարժիլ » : (Quieta non movere) : Արդ մինչեւ 1848 իր աս պահպանողական սկզբան հաւատարիմ մնաց :

1815 էն վերջը Մէթթէրնիքի կուրծքը Եւրոպայի տէրութեանց շքանշուններէն կը ծածկուէր , Եւրոպայի վեհապետաց եւ ի մասնաւորի Ռուսաց Աղեքսանդր Ա. Կայսեր Մենտորն եղած էր նաբօլիցի դուքսի աստիճանն առեր էր եւ ինքզինք Եւրոպայի ոստիկանը կը համարէր : Մէթթէրնիքի լուծն աւելի զգալի էր Աւստրիոյ մէջ ուր ոչ միայն Կայսեր փոխանորդի մ'իշխանութիւնն ունէր այլ ներքին ու արտաքին քաղաքականութեան բացարձակ տեսչութիւնըն իրեն ձգուած էր :

Մէթթէրնիք կ'ըսէր թէ բարձր ուսիկանութիւնը այն է տէրութեան գաղտնի ոստիկանութիւնը՝ քաղաքականութեան հետ սերտիւ կապուած է եւ թէ կերպով իմիք անոր վրայ կը տիրէ :

Մէթթէրնիքի Արգոսի աչքերուն տակ Աւստրիոյ ժողովուրդները չէին կրնար շարժիլ , լրագիրք՝ այնչափ քիչ ազատութիւն ունէին որք կարծես տէրութեան դիւաններուն մէջ խաբարեալ էին , վարչութեան մէջ մեծ կեդրոնականութիւն մը կը տիրէր , նահապետական դրութիւն մը սրուն հետխառնուած էր բռնութիւնը՝ ժողովրդին բարոյական կեանքն սպաններ էր , դպրոցներու մէջ ուսումն անգամ տէրութեան գաղափարաց համեմատ կ'աւանդէին եւ դրագիտութիւնը՝ բռնաւորական վարդապետութեանց վրայ ճառող դրքերէ կը բազկանար : Հեշտական երաժշտութիւն մը եւ զուարճութեանց բազմութիւնը՝ զ'ժողովուրդը բոլորովին կ'ընդարմացնէր :

Աւստրիոյ ժողովրդոց մէջէն միմիայն Հունգարա-

ցիք եւ Իտալացիք (Լոմպարտիոյ ժողովուրդը) չէին թմբեր եւ ամենէն աւելի ազատութեան հակամէտ էին : Հունգարիա՝ անանկ առանձնաշնորհումներ եւ օրէնքներ՝ ունէր որք աս երկրին տեսակ մ'ինքնօրինութիւն կը շնորհէին իսկ Լոմպարտիա՝ Աւստրիոյ ոստիկանութեան ջանքերուն հակառակ յեղափոխական կը մնար : Աս գեղեցիկ երկրին մէջ գաղտնի ընկերութիւններ կը կազմուէր որոց մին էր , Քարպօնարիներու ընկերութիւնը եւ որոց նպատակն էր զ'Լոմպարտիա եւ Վենետիկ Աւստրիոյ իշխանութեանէն ազատել : Քօնֆալօնիէրի , Մարօնչէլի երեւելի քաղաքացիները եւ Սիլվիօ Բէլլիքօ գրագէտը (բանտք իմ «Սիօ Բրիճիօնի» գրքին հեղինակը) անդամ էին աս ընկերութեան : 1821 ին Աւստրիական ոստիկանութիւնը՝ խուզարկութիւններ ըրած եւ աս քաղաքական յանցաւորները ձերբակալ ըրած էր , կոմսուհին Քօնֆալօնիէրի հարցաքննութեան դատաւորին դաշկիճն երթալով կը բաղձար իր ամուսնոյն վրայ լուր առնել : Այս հանձարեղ կինը՝ սխալմամբ ամբաստանելոց ակտովակին վրայ կը նստի :

— Տիկին , կ'ըսէ իրեն Դատաւորը , ամբաստանելոց նստարանին վրայ կը բազմիք :

— Վասնզի կը պատասխանէ կոմսուհին աս տեղի նստարաններուն ամենէն պատուաւորն է :

Ուրիշ անգամ մը բոլոր ամբաստանեալք՝ միահաղոյն դատաւորին առջին կը գտնուին :

— Դատաւորը՝ խօսքը Մարանչէլի ուղղելով կը հարցնէ թէ «Պատրաստ է իր մեղսակիցներուն անունը տալու :

— Պատրաստ եմ , կը պատասխանէ Մարօնչէլի : (Սիլվիօ Բէլլիքօ եւ իր միւս ընկերները կը գայրանան) :

— Անուանէ դ'անոնք կըսէ Դատաւորը :

— Լաւ բայց պէտք է համբերութիւն ունենաք մի

առ մի լսելու : — Ունիմ կը յաւելու Դատաւորը , — Այո՛ , բայց շատ համբերութիւն ունենալու էք , վասնզի մեղսակիցներս քսանուհինգ միլիօն են : (Այսինքն քսանուհինգ միլիօն Իտալացիք) : (¹)

Աս ազատասիրական եռանդը 1848 ին Գաղղիական յեղափոխութեան աւթիւ Աւստրիոյ միւս գաւառներուն մէջ ալ տարածուեցաւ :

Ազատութեան Գաղղիոյ մէջ վարած յաղթանակները համօրէն Եւրոպա դրդագած էին եւ դ'անիկա ընդհանուր յեղափոխութեան թատրոն մը դարձուցեր էին :

Իշխան Մէթթէրնիք՝ 1848 Փետր. 14 ին Գաղղիական յեղափոխութեան հետեւութիւններն այնչափ ծանրակշիռ կը համարէր որ Լուի-Ֆիլիպի անկումը եւ հանրապետութեան հրատարակութիւնը՝ զ'ինքն բողոքովին անհանգիստ էին ըրեր : Մեծ-Գիւանապետը՝ կը գուշակեր թէ խարխուլ անցելոյ մը պահպանութեան համար ըրած ջանքերն ալ չէին կրնար արդիւնաւոր ըլլալ սակայն վերջին փորձ մ'ըրաւ իր պահպանողական սկզբունքը շարունակելու եւ 1848 Մարտ 10 ին յայտարարութիւն մը հրատարակելով կ'ըսէր թէ Աւստրիոյ մէջ վերանորոգութիւն չ'սխտի ըլլայ եւ թէ բան մը չ'սխտի փոխուի :

Բայց Մէթթէրնիք՝ այս անգամ կը խաբուէր : Իր յայտարարութեան վրայ հագիւ թէ երեք օր անցած էր դործաւորը եւ ուսանողը Վիէննայի մէջ յեղափոխութիւն մը հանեցին եւ ոմանք Իշխան-Պաշտօնէին ամարանոցին վրայ յարձակելով դ'այն կողով-

(¹) Աս խօսակցութիւնը որ 1860 ին Միլան ներկայացեալ Սատրբոնթեան մը մէջ ալ գետեղուած է Էտկար-Սափնէ գրագէտը մէջ բերած է իր 1860 Շոյ. 13 ի Ռեվիւ տը Տէօ Մօնտին մէջ գրած մէկ յօդուածով :

տեցին ոմանք ալ « Սահմանադրութիւն » եւ « Մամ-
րոյ ազատութիւն » աղաղակելով դիւանական պալա-
տին վրայ գացին : Կռիւ մը ծագեցաւ եւ ժողովուր-
դը՝ զինարանը գրաւեց : Իշխան Մէթթէրնիք՝ ստիպ-
ուեցաւ ոչ միայն հրաժարիլ ի պաշտամանէ այլ դի-
շերանց (1848 Մարտ 13 էն 14 լուսնալու գիշերը)
թողուլ այն քաղաքը որմէ երսուն քառսուն տարի
չարունակ ազատութիւնը խեղդէլու հրամաններ կու-
տար : Սուրբ-Գաշնակցութիւնը եւ իր ճնշող քաղա-
քականութիւնն իրեն հետ կ'իյնային :

Այլ այս ընդհանուր յեղափոխութեան արդիւնքն
ալ տեւական չ'էր : Ազատութեան յաղթանակը վերջ-
նական չ'պիտի ըլլար : Ինչպէս ուրիշ տեղ ալ ըսած
ենք , ժողովուրդ մը ազատութիւն ստանալէ յառաջ
պէտք է ազատական ըլլայ այսինքն կամաց կամաց
պատրաստուի այն ազատական օրէնքին զ'որ պիտի
ընդունի , որպէս զի մի գուցէ զ'անոնք չարաչար
գործածէ :

Գաղղիոյ յեղափոխութիւնը՝ եւ այն ազատական
չարժումները որք առաջին կայսրութեան օրը տեղի
ունեցան 1815 էն վերջը իսպառ զսպուեցան , ինչ եւ
իցէ սկզբունք կամ վարդապետութիւն մը այն ատեն
կ'ընդհանրանայ ու կը զօրանայ երբ հալածուի : Զա-
նազան կրօնքներ՝ հալածմամբ տարածուեցան : Վա-
սընդի արդեւքի եւ հալածման մէջ դողցես հռչակաւոր
արդիլեալ պտղոյն հրապոյրը կայ : Արդ ազատութիւ-
նըն ու յեղափոխութիւնն ալ կէս դարու մօտ միջոց
հալածուելով՝ նորէն բուռն զօրութեամբ յ'երեւան
կ'ուգային եւ Աւստրիոյ , Գաղղիոյ , Հունգարիոյ ու
Իտալիոյ եւ ուրիշ երկիրներու մէջ հին կարգերն ու
սովորութիւնները մեկ-երկու տարի տակն ի վերայ
կ'ընէին : Բայց որովհետեւ ժողովուրդները պատ-
րաստուած չ'էին ասանկ յանկարծական փոխանձման

եւ արձակապետութիւնն ալ փոխանակ զսպողական
բուռն միջոցներու դիմելու , իմաստուն զիջումներ
կընէր , կրնայ ըսուիլ թէ մեկ կամ երկու տարուան
արիւնհեղութենէ մը վերջը քիչ փոփոխութեամբ
եւրոպա կը գտնէր այն վիճակը՝ որ 1815 էն վերջը
ունէր : Սակայն պահպանողական ոգին բոլորովին իր
չօրութիւնը կորուսած էր եւ միջամտութեան ու
Սուրբ-Գաշնակցութեան սկզբունքներուն տեղ ազա-
տականութիւնն ազդայնութեանց ու անմիջամտու-
թեան սկզբունքները՝ զանազան դահլիճներու քաղա-
քականութեան հիմ ըլլալ կ'սկսէին :



ՎԵՐՁԱԲԱՆ

Մէթ-թէրնիք՝ աս յեղափոխական ցոյցերուն մէջ խոյս տալէն յետոյ թէեւ նորէն Վիէննա վերադարձաւ ուր Ֆէրտինան հրաժարեալ կայսեր յաջորդի Ֆրանչիսկոս-Յովսէփ երիտասարդ կայսրը պատուով ընդունեցաւ զինքը եւ իրեն այցելութիւն մ'աւ ըրաւ բայց ոչ եւս քաղաքական գործերու միջամուխ եղաւ : Հետեւաբար չ'ուզեցինք իր առանձնական կենաց մէջ հետեւել իրեն :

Քլէման-Վինախտաս-Լօթէր , իշխան Մէթ-թէրնիք-Վինպուրկի , Դուքս Բօրթլլայի , Կոմս Քէօնիկսվարթի եւայլն , առաջին կարգի աւագ Սպանիոյ , ներքին խորհրդական արքունի եւ սենեկապան , 1809 էն սկսեալ պաշտօնեայ պետութեան , եւ յետոյ վարիչ-պաշտօնեայ արտաքին գործոց , 1821 Մայիս 25 էն մինչեւ 1848 Մարտ 13 Մեծ Դիւանապետ տան Կայսեր , արքունեաց եւ տէրութեան՝ 1773 Մայիս 13 ին ծնած էր : Երեք անգամ ամուսնացեր էր եւ իր երեք ամուսնութենէն ալ զաւակներ ունեցեր էր :

Մեռաւ 1859 Յունիս 11 ին , ճիշդ այն միջոցին ուր պիտի սկսէր այն պատերազմը որ պատճառ պիտի ըլլար միութեանն Իտալիոյ որուն դէմ աս պաշտօնեայն իր իշխանութեան օրերն այնքան մաքառած էր :

« Ազգային գրադարան »



NL0249853

